

Ընդունելության գործը կշահեր, եթե...



Վաճառվելու

ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

կան արդյունքները, սակայն մասնաճյուղի ընդունելության գործընթացն ավելի կշահեր, եթե մասնաճյուղի կազմում գործեր հենակետային ավագ դպրոց:

Բուհի ռազմավարական հաջող նպատակն է մասնաճյուղում ապահովել կրթական ծրագրերին և պետական միասնական չափանիշների պահանջներին համապատասխանող որակյալ կրթություն: Բուհը նաև խնդիր է դնում ապահովել արդի միջազգային չափանիշներին և աշխատաշուկայի պահանջներին համահունչ մոր ծրագրերի ներդրումը մասնաճյուղում:

Ուսումնական պլանների բարելավման գործընթացի շրջանակներում 2013-14 ուստարվանից մասնաճյուղը իրականացնում է մոդուլային կրթության հենքով ձևավորված ձևում ուսումնական ծրագրեր՝ բարձրագույն ուսանողների ինքնուրույն աշխատանքի դերը և ուսումնական արդյունավետությունը: Ստեղծվում են անհրաժեշտ պայմաններ և մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և զննարկման գործընթացների էական բարելավման համար:

Լ.Պետրոսյանը հաջորդաբար ներկայացրեց ռազմավարական նպատակներն ու խնդիրները, դրանց լուծման ուղիները: Նա նշեց, որ անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել գիտական կարգերի (հատկապես՝ երիտասարդ) պատրաստման գործընթացին, միաժամանակ ձեռնարկել միջոցներ՝ վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներին դասախոսների մասնակցության համար: Դասախոսների մասնագիտական առաջընթացի նպատակով ներկայումս ակտիվորեն գործում է գիտական հայցորդների ինստիտուտը:

Բուհում իր առօրյա ել բնական գործունեությունն է ծավալել նաև ուսանողական խորհուրդը, որը համակարգել է ուսանողության մասնակցությունը մասնաճյուղի կառավարման գործընթացում և աջակցել տարաբնույթ միջոցառումների կազմակերպմանը: Ուսանողական խորհրդի ներկայացուցիչներն ընդգրկված են սոցիոլոգիական ուսումնասիրություններ իրականացնող տարբեր հանձնաժողովների կազմում: Ուսանողական խորհուրդն ակտիվորեն մասնակցում է մասնաճյուղի և այլ երիտասարդական կազմակերպությունների նախաձեռ-

նած բազմաթիվ միջոցառումների՝ պատվով ներկայացնելով մասնաճյուղը:

Բուհը շարունակում է կրթական և հետազոտական ծրագրերին համապատասխանող նյութատեխնիկական բազայի ձեռավորման գործընթացը: Մասնաճյուղում բավականին բարելավվել են ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները: Ավարտման փուլում են «Հանքահարստացման և մետալուրգիայի» ուսումնական լաբորատորիայի վերանորոգման աշխատանքները: Մեծ ուշադրություն է դարձվում գրադարանային ռեսուրսների համալրման և զարգացման խնդիրներին: Գրադարանի ընթերցասրահին կից գործում է էլեկտրոնային ընթերցասրահ:

Մասնաճյուղում աշխատանքներ են իրականացվել նաև մշակութային և մարզական ծրագրերի համակողմանի զարգացման ուղղությամբ, կազմակերպվել են սպորտային և մշակութային տարբեր միջոցառումներ: Արտաբյուջետային լրացուցիչ ֆինանսական միջոցների բացակայությունը, ցավոք, դեռևս թույլ չի տալիս մասնաճյուղի աշխատակիցների համար իրականացնել սոցիալական ծրագրեր: Առաջիկայում այդ ուղղությամբ հարկ կլինի ձեռնարկել լրացուցիչ միջոցառումներ: Բյուջետային համակարգի կատարելագործման ճանապարհով ապահովվել է ֆինանսական ռեսուրսների արդյունավետ և թափանցիկ բաշխում և բոլոր բնագավառների կառավարման գործընթացների համաձայնեցում: Մասնաճյուղի ֆինանսական աղբյուրներն են պետական բյուջեից տրվող ֆինանսավորումը (միայն ուսման վարձեր և կրթաթոշակ) և արտաբյուջետային մուտքերը (զերակաշիռ մասը՝ վճարովի ուսուցման վարձեր):

Մասնաճյուղի ֆինանսական կառավարումն իրականացվում է ՀՀ ԳՖՀ ֆինանսական գործունեության նորմատիվային բազային համապատասխան:

Բուհը լուրջ աշխատանքներ է իրականացնում տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերման և կիրառման ոլորտում: Ներկայումս ներքին ցանցին և համացանցին միավորված է 73 համակարգիչ, որոնք օգտագործվում են ուսումնական գործընթացում և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար: Ներմասնաճյուղային կառավարման հա-

մակարգում, ուսանող-դասախոս փոխհարաբերություններում լայնորեն կիրառվում են տեղեկացման էլեկտրոնային ձևերը: ՀՀ ԳՖՀ ղեկավարությունը խթանում է մասնաճյուղի գիտական ներուժի զարգացման և միջազգային գիտական ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ տարվող աշխատանքները: Ստեղծված են բոլոր հնարավորությունները՝ ազատորեն օգտվելու հանրապետական և արտասահմանյան անվճար գիտատեղեկատվական ցանցերից, տպագիր տեղեկատվական աղբյուրներից: 2012 թվականից մասնաճյուղը ընդգրկված է Իլմենաուի (Գերմանիա) տեխնիկական համալսարանի համակարգմամբ իրականացվող TEMPUS «Արտադրական համագործակցություն և հեռավար ու վիրտուալ գործիքամիջոցների վրա հիմնված ստեղծագործական ճարտարագիտական կրթություն» նախագծում: Նախագծի շրջանակներում իրականացվում են աշխատանքներ հեռավոր լաբորատորիաների ցանցի ստեղծման ուղղությամբ, որից կարող են օգտվել նախագծի մասնակից բուհերի ուսանողները: Ծրագրի հաջող ավարտի դեպքում մասնաճյուղում կստեղծվի շուրջ 27000 եվրո արժողությամբ հիբրիդային լաբորատորիա, որն էականորեն կօժանդակի ուսանողների մասնագիտական կարողությունների և գործնական հմտությունների ձեռքբերմանը:

Մասնաճյուղի զարգացման, ճարտարագիտական կրթությամբ որակյալ մասնագետների ուսուցման համար կարևոր գործոններից են նաև արտաքին շահակիցների (զխավորապես՝ տարածաշրջանի արտադրական ձեռնարկությունների) հետ գործընկերային կապերի ամրապնդումը և ընդլայնումը: Մասնաճյուղի գործունեության լուսաբանման նպատակով շարունակվել է ակտիվ համագործակցությունը «Սոսի» և «Խուստուփ թիվի» հեռուստալիքների, «Այունյաց երկիր» մարզային թերթի հետ: Նշված ՀԱՄ-ների շնորհիվ հանրությունն իրազեկվել է ներմասնաճյուղային կյանքին առնչվող առավել հետաքրքիր և կարեւոր միջոցառումների և իրադարձությունների մասին:

ՀՀ ԳՖՀ պրոռեկտոր Սուրեն Աղաբալյանն իր ելույթում փաստեց մասնաճյուղի գործունեության ակնհայտ առաջընթացը և դրական արդյունքները:

ԼԻՆԵԼ ՍԱՐԳՅԱՆ

Թեման Այունիքի թագավորությունն էր

Վիսամոզի փորձ

Նոյեմբերի 10-ին Կապանի մշակույթի կենտրոնի փոքր դահլիճում կազմակերպվեց «Այունիքի թագավորությունը» թեմայով գիտաժողով: Նախաձեռնությունը Կապանի քաղաքապետին կից երիտասարդական խորհրդին էր, բանախոսները մարզկենտրոնի երիտասարդ պատմաբաններն էին, նպատակը՝ լուսաբանել Կապան աշխարհի պատմության 9-12-րդ դարաշրջանին վերաբերող պատմական իրողությունները, երիտասարդ մասնագետներին մղել պրպտումների, կայացնել գիտական հետաքրքրությունների շրջանակը, հանրությանը ճանաչել տալ հայրենի երկրամասի պատմական անցյալը:

Բացելով գիտաժողովը՝ Կապանի քաղաքապետի տեղակալ Ռուդոլֆ Սարգսյանը ողջունեց բոլոր նրանց, ովքեր արձագանքել են իրենց նախաձեռնությանը և համոզված կարծիքներ հայտնեց, որ հաջողության դեպքում կկրի շարունակական

բնույթ՝ իր շրջանակի մեջ ներառելով մարզի մյուս տարածաշրջանների երիտասարդ պատմաբաններին:

Գիտաժողովի անդրաձևի բանախոսը Լիլիթ Առաքելյանն էր, ով հանդես եկավ «Ստեփանոս Օրբելյանի երկը՝ որպես Այունիքի պատմության հիմնական աղբյուր» թեմայով զեկուցումով: Նախ ներկայացվեց Ստեփանոս Օրբելյան պատմիչի գրական հարուստ ժառանգությունը, նաև նշվեց, որ նրա ամենանշանակալի երկը՝ «Պատմութիւն մահաճիւնի Սիսական» կամ «Պատմութիւն մահաճիւնի Սիսական» ծավալուն աշխատությունն է՝ Այունիքի միջնադարյան ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական կյանքի մասին գրական մի ամբողջական հուշարձան: Լ.Առաքելյանը քննության առարկա էր դարձրել Ստեփանոս Օրբելյանի աշխատության սկզբնաղբյուրները, երկի հրատարակությունները, Ստեփանոս Օրբելյանի շարադրած Այունյաց նահանգի պատմությունը՝ վաղնջական ժամանակներից մինչև իր ապրած

ժամանակաշրջանը: Որպես տիրապետող դասի ներկայացուցիչ և Այունյաց իշխանազուն՝ Օրբելյանը ջանում է արդարացնել Այունիքի (Կապանի) թագավորության ստեղծումը, որը, պատմիչի կարծիքով, երեսն էր եկել պատմական անհրաժեշտությամբ և ժամանակի թելադրանքով: Վիճական արձանագրությունների օրբելյանական ընթերցումների շնորհիվ հնարավոր է դարձել ամբողջապես վերականգնել Ամաղուի Նորավանքի, Տաթևի, Գնդեվանքի, Վահանավանքի, Վանեվանքի, այլ տաճարների պատերի վորագրված բազմաթիվ արձանագրություններ, առանց որոնց միջնադարով զբաղվող պատմաբաններին չափազանց դժվար էր լինելու որոշակի պատկերացում ունենալ ժողովրդի սոցիալ-քաղաքական վիճակի և այլնի մասին, - այս եզրահանգմամբ ավարտեց իր խոսքը բանախոսը:

Այունիքի պատմաաշխարհագրական դիրքի և բերդերի տեղադրության մասին առանձին զեկուցումներով հանդես եկավ Վրեժ

Բաղալյանը, Կապան տեղանունը ստուգաբանեց Հասմիկ Գրիգորյանը, Այունյաց թագավորության հռչակումը ներկայացրեց Գոռ Հովհաննիսյանը, Այունյաց թագավորության անկումը՝ Սուսաննա Ռուբենյանը, Վահանավանքում ամփոփված իշխանազուն անձանց մասին խոսեց Էդգար Հարությունյանը:

Միջոցառմանը մասնակից Այունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը ողջունեց Այունիքի թագավորությանը վերաբերող գիտաժողով անցկացնելու նախաձեռնությունը՝ համոզմունք հայտնելով, որ ապագայում երիտասարդ պատմաբանները կանդադառնան պատմական այլ կարևոր թեմաների: Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն Գրիշա Սմբատյանն իր խոսքում նշեց, որ հատուկացել է ժամանակը մարզի դպրոցներում դասավանդելու Այունիքի պատմությունը:

Միջոցառման ավարտին զեկուցողներին հանձնվեցին հավաստագրեր:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Խորհր

Նոյեմբերի 4-8-ը Այունիքի մարզի որոնողափրկարարական թիմն անցկացրել է ներքին որակավորման երրորդ ուսումնական վարժանքը: Վարժանքն ընթացել է երկու փուլով: Նոյեմբերի 4-5-ին անցկացվել են նախապատրաստական դասընթացներ, նոյեմբերի 6-7-ին տեղի են ունեցել ուսումնավարժանքներ: Վարժանքի անցկացմանը հետևել է Արմավարության բնակչության պաշտպանության և արևմտյան հետևանքների վերացման վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Հովհաննես Եմիշյանը: Վարժանքների նպատակն էր ուսումնասիրել Այունիքի որոնողափրկարարական թիմի հնարավորությունները, նպաստել թիմի անդամների կարողությունների և մասնագիտական ունակությունների զարգացմանը, նոր տեխնիկայի կիրառմանը: Նոյեմբերի 7-ին Կապանի օդանավակայանի տարածքում ուսումնավարժանքն իրականացվել է «Խոշոր անտառային հորեհներին հորեհաշիջման կազմակերպում և իրականացում» թեմայի շրջանակում, որին մասնակցում էին մարզային և տեղական իշխանության ներկայացուցիչներ:

Նոյեմբերի 10-ին Կապանի մշակույթի պալատն այս տարի արդեն չորրորդ անգամ հյուրընկալել էր Երեսանի պետական կրկեսի դերասաններին: Նոր, հետաքրքիր կրկեսային համարներով դերասաններն ուրախացրին ներկաներին՝ խոստանալով կրկես այցելել մարզկենտրոն: Պետական կրկեսի անձնակազմն այն մտահոգությունը հայտնեց, որ հնարավորություն չունի մեծ կենդանիների մասնակցությամբ համարներ ցուցադրել մարզում:

Հայաստանում տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ ՏԻՄ համակարգի կազմավորման և ընթացիկ տարում գրանցած էական ձեռքբերումների համար Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը ստացել է ՀՀ վարչապետի շնորհակալագիր:

Նոյեմբերի 7-ին Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը հյուրընկալեց «Կապանի նորարար ուսուցիչ» մրցույթի մասնակիցներին: Հանդիպման ընթացքում քննարկվեցին մրցույթի առավելություններն ու թերությունները, ամփոփվեցին արդյունքները: Մրցանակային տեղեր զբաղեցրած ուսուցիչները ստացան դրամական պարգևներ և պատվոգրեր, իսկ մյուս մասնակիցները՝ շնորհակալագրեր:

Նոյեմբերի 11-ին «Օժիածան» առաջնորդների կենտրոնը ՀՀ-ի կարիերայի պլանավորման և զարգացման կենտրոնի յոթնամյա ուսումնառության ավարտն ամփոփվեց միջոցառումով: Տեսաֆիլմի միջոցով ներկայացվեց կենտրոնի գործունեությունը, մասնավորապես, այն սեմինարներն ու դասընթացները, հանդիպումներն ու քննարկումները, որոնց շնորհիվ սաները գիտելիքներ են հմտություններ են ստացել: Այնուհետև դպրոցականները հանդես եկան երաժշտական կատարումներով: «Օժիածան» առաջնորդների կենտրոնի ՀՀ-ի նախագահ Սուսաննա Մարտիրոսյանը կենտրոնի սաներին հանձնեց վկայականներ:

Նամակ

Մեկ տարի հետո՝ 2015թ. դեկտեմբերի 3-ին, լրանում է հայ արձակի նշանավոր ներկայացուցիչ, վաստակաշատ ազգային ու հասարակական գործիչ Սերո Խանգադյանի ծննդյան 100-ամյակը



Սյունիի մարզի Սուրեն Խաչատրյանի

Հարգելի՛ պարոն մարզպետ Հարգելի՛ փիկին Նախարար Հարգելի՛ պարոնայք

Կարծում ենք՝ Սերո Խանգադյանի հոբելյանը պետք է նշվի պետական մակարդակով և ըստ պատշաճի:

Կարծում ենք նաև՝ հոբելյանի նախապատրաստությունը պետք է սկսել այժմվանից, քանի որ անցած մոտ քսան տարում Սերո Խանգադյանն ու նրա գրական ժառանգությունն ուշադրությունից դուրս էին, և ուրեմն մի քանի ուղղությամբ աշխատանք տանելու խնդիր ունենք, որի համար ժամանակ ու ջանք է պահանջվում:

Անշուշտ, ձեզանից յուրաքանչյուրն ունի կամ կունենա իր պատկերացումները գրողի հոբելյանի կազմակերպման վերաբերյալ: Բայց մենք նույնպես ունենք նկատառումներ, որոնց մասին կուզենայինք ձեզ իրազեկ դարձնել՝ ակնկալելով, որ առաջարկվող միջոցառումների գոնե մի մասը կմտնի հոբելյանական ծրագրի մեջ:

Սերո Խանգադյանը՝ ստորեւ:

1. Հրատարակել Սերո Խանգադյանի ստեղծագործությունների ընտրանու հատորակներ, որի մեջ ընդգրկել «Մխիթար Սպարապետ» պատմավեպը, «Թագուհին հայր» վեպը, «Մատյան եղելությանց» վիպակը, նրա լավագույն պատմվածքները (գրականագետների հետ խորհրդակցելով՝ կարելի է և ընտրանու այլ տարբերակներ հրատարակել):

2. «Հայրենապատում» վիպաքի յոթ գրքից հրատարակվել է չորսը: Հաշվի առնելով այդ մատյանի աղբյուրագիտական, տեղագրական, բանասիրական, հնագիտական, ազգագրական նշանակությունը՝ հրատարակել ուղեգրությունների ու ճամփորդական նոթերի վերջին երեք հատորը եւ: Ի դեպ, մեզ չի հաջողվել պարզել, թե որտեղ են գտնվում «Հայրենապատում»-ի վերջին երեք գրքի անտիպները, թեև դրանց գոյության մասին կան բազում վկայություններ, այդ թվում՝ հեղինակի վկայությունը:

Քննարկել «Հայրենապատում» սքանչելի մատյանը ՀՀ պետական մրցանակի ներկայացնելու հարցը:

3. Քննարկել առանձին գրքով Սերո Խանգադյանի հոդվածները, հարցազրույցները, ելույթները, նամակները հրատարակելու հարցը: Նա միշտ էլ հանդես է եկել հոդվածներով, հարցազրույցներով, ելույթներով, նամակագրությամբ, բայց երբեք դրանք ի մի չեն բերվել ու չեն հրատարակվել:

4. «Սյունյաց երկիր» թերթի հատուկ համարի հրատարակում (A3 չափսի 104 էջ ծավալով, որից 8 էջը կավճապատ թղթի վրա՝ 4 գունաթափանցմամբ, 2000 տպաքանակով):

5. Սերո Խանգադյանի կյանքն ու գրական ժառանգությունը նորովի իմաստավորման, արժեւորման կա-

րիք ունեն: Այդ խնդիրն ինչ-որ չափով կարող են լուծել մենագրությունները, որոնք հեղինակել են (բայց չեն հրատարակել) բանասիրական գիտությունների դոկտոր Մարտին Գիլալյանը (Սերո Խանգադյանի կյանքը եւ գործը), Վահան Աղաբաբյանը (Սերո Խանգադյանի պատմվածքներն ու վիպակները):

6. Հայաստանի ազգային արխիվի կամ Զարեհի անվան գրականության եւ արվեստի թանգարանի միջոցով ի մի բերել Սերո Խանգադյանի անտիպ գործերը, որոնք ցաքուցրիվ վիճակում են, որոնք կարող են և անհետանալ (եթե, իհարկե, դրանց մի մասն արդեն իսկ չի կորել): Արժեք հավաքել և պետական հովանու ներքո վերցնել նաև Սերո Խանգադյանին առնչվող՝ մասնավոր հավաքածուներում եղած տեսագրություններն ու ձայնագրությունները, քանի դեռ դրանք պահպանվում են:

7. Մայրաքաղաքում և իր ծննդավայր Գորիսում կանգնեցնել գրողի հուշարձանը (եթե հոբելյանական տարում չհասցնենք գործն ավարտել, ապա գոնե ձգտենք որոշարկել տեղը, լուծել հողահատկացման խնդիրը և հուշարձանի նախագծի համար մրցույթ հայտարարել):

8. Գորիսի պետական քոլեջի հայոց լեզվի և գրականության լսարանը կոչել Սերո Խանգադյանի անվամբ. այդ կրթօջախում է գրողը ստացել միջնակարգ-մասնագիտական կրթությունը:

9. Երեւանի պետական համալսարանի և Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի գրականության ամբիոնների մասնակցությամբ Գորիսում անցկացնել համատեղ գիտական նստաշրջան՝ նվիրված Սերո Խանգադյանի գրական ժառանգությանը:

10. Ցանկալի է, որ Գորիսի պետական համալսարանում և Գորիսի պետական քոլեջում սահմանվեր Սերո Խանգադյանի անվան կրթաթոշակ:

11. Հուշատախտակ փակցնել Երեւանի Տերյան 59 շենքի պատին. 1954-71թթ. այդ շենքում է բնակվել Սերո Խանգադյանը:

Հուշատախտակ փակցնել նաև Գորիս քաղաքի Մաշտոցի փողոցի 27 տան պատին (գրողն այդտեղ է բնակվել 1936-46թթ.):

12. Սերո Խանգադյանի գորիսյան առանձնատան (Գորիս, Արզունյան 32) մուտքի մոտակա փողոցի շենքի պատկանելության հարցում որոշակիություն մտցնել և քննարկել գրողի ավագ որդու՝ գեղանկարիչ Արարատ Խանգադյանի առաջարկը՝ այդ տունն իրեն հանձնելու և այնտեղ սեփական գեղանկարների մշտական ցուցահանդես կազմակերպելու մասին:

13. Վերանորոգել Սերո Խանգադյանի գորիսյան առանձնատունը (այն Գորիս համայնքի սեփականությունն է) և ավարտին հասցնել այնտեղ տուն-թանգարանի ստեղծումը:

14. Վերանորոգել Սերո Խանգադյանի Երեւանյան առանձնատունը (Նորքի 34/2 հասցեում գտնվող), որ Երեւան քաղաքի համայնքային սեփականություն է, և այնտեղ հիմնադրել գրողի մայրաքաղաքային տուն-թանգարանը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 1999թ. դեկտեմբերի 29-ի N791 որոշումը:

15. Երեւան քաղաքի փողոցներից մեկը կոչել Սերո Խանգադյանի անվամբ:

16. Երեւան քաղաքի Սերո Խանգադյանի անվան դպրոցի (N184 ավագ դպրոց) բակում դնել Սերո Խանգադյանի կիսանդրին:

17. Հանրային հեռուստատեսությամբ ցուցադրել՝

ա) Սերո Խանգադյանի «Մատյան եղելությանց» վիպակի հիման վրա նկարահանված հեռուստաներկայացումը,

բ) Սերո Խանգադյանին նվիրված (կամ նրա մասնակցությամբ պատրաստված) տեսանյութերից առավել ուշագրավները (օրինակ, ծննդյան 70-ամյակի առիթով կազմակերպված հոբելյանական երեկոյի տեսագրությունը կամ «Վարագույր» հաղորդաշարի թողարկումը, որտեղ ինքը խոսում է իր անցած ճանապարհի, իր թողած գրական ժառանգության մասին),

գ) «Սերո Խանգադյան» վավերագրական ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Գեորգ Հայրյան, ռեժիսոր՝ Ջ.Ժամ-հարյան),

դ) «Լքված հեքիաթների կիրճը» գեղարվեստական ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Մոնղո Աղաբաբով, ռեժիսոր՝ Էդմոնդ Քյոսայան),

ե) «Մխիթար Սպարապետ» պատմվեպի մոտիվներով նկարահանված «Հուտ աստղ» գեղարվեստական ֆիլմը (սցենարի հեղինակ՝ Կոնստանտին Իսաև, ռեժիսոր՝ Էդմոնդ Քյոսայան):

18. Նկարահանել նոր հեռուստաֆիլմ՝ նվիրված Սերո Խանգադյանին՝ ժամանակների հեռավորությունից փորձելով նորովի արժեւորել նրա թողած ստեղծագործական ժառանգությունը:

19. Հանրային ռադիոյով ներկայացնել Սերո Խանգադյանի՝ հատկապես Արցախի հիմնախնդրին նվիրված ելույթները: Նման ձայնագրություններ են պահպանվում և հանրային ռադիոյում, և Հայաստանի ազգային արխիվի կիսնոթոնոֆոն փաստաթղթերի և ապահովագրական պատճենների մասնաճյուղում: Ներկայացնել նաև «Մատյան եղելությանց» վիպակի, «Սպիտակ գառ» պատմվածքի և մյուս գործերի ռադիոթեմականացված տարբերակները:

20. Հրատարակել Սերո Խանգադյանի լուսանկարների պլեոմ նկատի ունենալով հանգամանքը, որ դրանք ժամանակին չհավաքելու դեպքում կարող են կորստյան մատնվել:

21. Ցանկալի կլիներ վերահրատարակել Սերո Խանգադյանի «Դարաբաղը կրակների մեջ» գիրքը, որը լույս է տեսել 2006թ. 500 տպաքանակով և չի հասել ընթերցողների լայն շրջանակին:

22. Հանրապետության պետական թատրոնների միջոցով բեմականացնել «Մխիթար Սպարապետ» պատմավեպը (1970-ական թվականներին Կապանի և Գյումրու թատրոններում բեմականացվել էր այդ գործը՝ ունենալով մեծ արձագանք: Այսօր էլ՝ հայ-տղթեզանական հարաբերությունների լարվածության, Լեռնային Դարաբաղի հիմնախնդրի վերջնական չկարգավորվածության պայմաններում, համոզված ենք, վեպի նորովի բեմականացումը լրջորեն կնպաստեր մեր ազգային ոգու բարձրացմանը և մատաղ սերունդին կներարկեր պատասխանատվության ոգի՝ մեր անկախ պետականության և ազգային արժանապատվու-

թյան համար):

23. ՀՀ կրթության և գիտության նախարարության համապատասխան կառույցում քննարկել Սերո Խանգադյանի ստեղծագործությունների՝ հանրակրթական դպրոցների, միջին մասնագիտական և բուհական կրթական ծրագրերում ընդգրկվածության վիճակը (վերջին տարիներին որոշ գործեր հանրապետական կրթական ծրագրերից, մինչդեռ երկարամյա և փորձառու մանկավարժները մինչև հիմա զարմացած են, թե ում թեթե ձեռքով է օրինակ, «Սպիտակ գառը» պատմվածքը հանվել դպրոցական ծրագրերից):

24. Հայոց մեծ եղեռնի ժամանակ մեր ժողովրդի առանձին հատվածների հերոսական պայքարի, ինչպես և Մեծ եղեռնի անդրադարձները յուրովի ու որոշակի տեղ են գտել Սերո Խանգադյանի ստեղծագործություններում: Կարծում ենք, արժեք քննարկել այդ ստեղծագործությունների նվիրված գիտաժողով անցկացնելու գաղափարը (2015թ. գարնանը) և այդ ստեղծագործությունների ժողովածու հրատարակելու նպատակով մեջ ընդգրկելով «խոսքը, Հայաստանի լեռներ» վեպը, «Մեռելները հիշում են», «1971, ամառ», «Հայրենի կարգավ» և մյուս գործերը: Ի դեպ, չպետք է մոռանալ, որ Հայոց մեծ եղեռնը վերապարծ մարդկանց ճակատագրի քննարկումը, որ սկիզբ առավ հատկապես Ակսել Բակունցի «Ծիրանի փող»-ով, շարունակություն ունեցավ Սերո Խանգադյանի ստեղծագործություններում:

25. Հոբելյանական միջոցառումներն ավարտել Երեւանում՝ Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում՝ Սերո Խանգադյանին նվիրված գրական-երաժշտական երեկույթով:

Առաջարկվող միջոցառումներին առնչվող հարցերը լուծելու համար անհրաժեշտ կլինի իշխանության տարածքային ու տեղական մարմինների, ինչպես և հանրապետական բազմաթիվ գերատեսչությունների, մշակութային կազմակերպությունների համատեղ աշխատանքը: Իսկ դա կարելի է անել՝ միայն ու միայն հոբելյանական կառավարական հանձնաժողով ստեղծելով, որն էլ ի գործ կլինի կարգավորել Սերո Խանգադյանի հոբելյանի նախապատրաստության գործընթացը:

Սույն նամակը միայն «Սյունյաց երկիր» խմբագրականի մտածումների արգասիքը չէ: Այն նաև Սերո Խանգադյանի հազարավոր հայրենակիցների և ընթերցողների, ինչպես և նրա ծննդավայրի մարդկանց ցանկությունների արտահայտությունն է: Ուստի և ողջամիտ կլինե՞ր՝ մեր առաջարկությունները ներկայացնել ՀՀ նախագահին ու հանրապետության վարչապետին:

Սույն փաստաթղթում գիտակցաբար չքննարկեցինք առաջարկվող միջոցառումների նպատակահարմարության հարցը՝ համոզված լինելով, որ ձեզանից յուրաքանչյուրը քաջատեղյակ է Սերո Խանգադյանի գրական ժառանգությանը, ծանոթ է խորհրդային ժամանակների բարդ պայմաններում նրա ազգային, հայրենամեծ գործունեությանը: Այնպես որ, քիչ հավանական ենք համարում, որ մեր առաջարկությունների վերաբերյալ տարակույսներ կլինեն ձեր մեջ: Իսկ եթե նման տարակույսներ, այնուամենայնիվ, առաջանան, ապա մենք սիրով կմասնակցենք դրանց քննարկմանն ու կիմնավորեք մեր նկատառումները:

Հարգանքով՝
Սամվել Ալեքսանյան
«Սյունյաց երկիր» թերթի խմբագիր
12 նոյեմբերի 2014թ.

Մշակույթի նախարար Հասմիկ Դողոսյանին



Հայաստանի գրողների միության նախագահ Էդվարդ Միրիսոնյանին



Գրող, հրատարակախոս Զորի Բալայանին

Մարզի գյուղեր

Տաթևը՝ արտագաղթի, աղքատության եւ գործազրկության օրհասի մեջ



ՍԿԻՉԲԸ ԷՏ 1

մինչեւ թարմ ուրցով պատրաստված թեյը, Սատանայի կամրջի հանքային ջուրը, տարբեր մրգերից եւ հատապտուղներից պատրաստված թարմ հյութերն ու տնական խմիչքը:

Տաթևն ունի Հայրենական մեծ պատերազմի հերոս, տաթևացի Սուրեն Առաքելյանի անվան միջնակարգ դպրոց՝ 80 աշակերտով: Դպրոցում դասավանդող 22 ուսուցիչից 18-ն ունի բարձրագույն կրթություն:

Տաթևում կան երեք մթերային խանութ, մշակույթի չգործող (գրեթե ավերված ու աղքատների վերածված) տուն, բուժամբուլատորիա՝ 5 մասնագետ բժիշկ-բուժքույրերով, վանական համալիրում գործող հուշանվերների խանութ, գյուղացիների ուժերով սեփական առանձնատներում բացված տասը հյուրատուն:

Համայնքը գազիֆիկացված չէ, ունի խմելու ջրի մշտական եւ անվտանգ ապահովման, աղբահանության խնդիրներ:

Համայնքն ունի մարզկենտրոնից եւ Գորիս քաղաքին միացնող ճանապարհներ:

Ունի ներքին ավտոմատ հեռախոսային կայան 140 համար հզորությամբ, որ ներառում է նաեւ Սվարանց, Տանձատափ գյուղերը:

Համայնքը հնարավորություն ունի դիտել միայն երկու հեռուստատեսություն:

Առկա է կաթելային ինտերնետ կապ, որի ծառայությունից օգտվում է 30 շահառու:

Գյուղից օրական երկու ավտոբուս մեկնում է Գորիս, իսկ շաբաթական երկու անգամ՝ Կապան:

Համայնքում գործում է փոստատունը:

«Տաթևը» գրոսաշրջային կենտրոնը հայտարարելու մասին» ՀՀ կառավարության 2009թ. հունիսի 26-ի N848-Ն որոշմամբ «Տաթև» վանական համալիրը եւ հարակից հող, Շինուհայր, Հալիծոր, Տաթև, Սվարանց, Տանձատափ, Աղվանի եւ Բարձրավան գյուղական համայնքները հայտարարվել են գրոսաշրջային կենտրոն: Նույն որոշմամբ հաստատվել են «Տաթև» գրոսաշրջային կենտրոնի զարգացման

ծրագրի հայեցակարգային նպատակները եւ գերակա խնդիրները:

2010թ. հոկտեմբերի 16-ին հանդիսավորությամբ բացվեց աշխարհի ամենաերկար «Տաթևի թեյեր» ճոպանուղին, որի երկարությունը 5.7 կմ է:

Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի 2010թ. փետրվարի որոշմամբ, Տաթևում գրոսաշրջության եւ տնտեսական զարգացման նպատակով, վերականգնվելու են Տաթևի վանական համալիրը, համալիրի տարածքի դպրատունը, Հարանց մեծ անապատը, իսկ գրոսաշրջային կենտրոնում հիմնվելու է գիտակրթական համալիր:



թական համալիր:

Տաթև գյուղի մասին վերը նշված տվյալները մեկ անգամ եւս թարմացնելով ու ընթերցելով, թվում է, գյուղը ոչնչով լավ կամ վատ չէ մեր մյուս համայնքներից: Ավելին, նույնիսկ շատ հարցերով առաջ է առանձին գյուղական համայնքներից, իսկ որոշ դեպքերում՝ ուղղակի շատ հետ է մնացել:

Մի խոսքով, Տաթև համայնքը, որ հայտնի է իր վանական համալիրով, այժմ էլ՝ գրոսաշրջության կենտրոն հանդիսանալով, կարելի է ասել, մի սովորական, հոգաշատ, իր խնդիրներով այժմեական, հիմնականում հոգեվարք ապրող գյուղերին չզիջող

համայնք է:

Մինչդեռ թվում էր՝ Տաթևն այլ պետք է լիներ. մի գյուղ, որտեղ տարեկան հազարավոր գրոսաշրջիկներ են այցելում, հաճախ օթեւանում այրտեղ, սնվում եւ հանգստանում: Պարզվում է՝ գյուղը պատրաստ չէր գրոսաշրջիկներ ընդունելուն, գրոսաշրջության կենտրոն դառնալուն: Ավելին, գյուղն օրեցօր հետընթաց է ապրում, եւ նրան ոչնչով չեն կարող փրկել ոչ Փինեսի ռեկորդակիր հանդիսացող «Տաթևի թեյեր» ճոպանուղին, ոչ էլ բացառիկ վանական համալիրը:

Սկսենք Տաթև մտնող ճանապարհից:

Այդ ճանապարհը՝ Գորիս-Տաթև մայրուղին, տասնամյակներ շարունակ ծառայել է բնակչությանը, մինչդեռ այսօր, որ դարձյալ խիստ գործածական է, կարելի է ասել, պիտանելությունից դուրս է եկել, վերածվել քարուքանդ, ջրափոսերով լեցուն, անդունդների վրա կախված արահետների: Եվ այդ գողգոթան ձգվում է Սատանայի կամրջից մինչեւ Տաթև: Մինչդեռ Գորիս-Տաթև ճանապարհը պետք է առանձնահատուկ բարեհարմար լիներ, գրեթե՝ միջազգային նշանակության, եթե այն տանում է դեպի գրոսաշրջության կենտրոն, աշխարհում բացառիկ ճոպանուղի, դեպի պատմական վանական համալիր:

Մտնելով գյուղ, պարզվում է՝ Տաթև համայնքի հիմնախնդիրը սոսկ իր վթարային, քարուքանդ ճանապարհով չի ավարտվում: Այստեղ, առաջին իսկ պահից, գլխիդ են թափվում տաթևացիների հոգսերն ու չափազանց լուրջ մտահոգությունները:

Համայնքի գյուղապետը, ցավոք, տեղում չէր, եւ մենք բավարարվեցինք գյուղի տարեցների, հասարակ տաթևացիների, հին ու նոր մանկա-

հայտնվել էր ինչ-որ մեկի կամքով եւ դրանից հետո չգիտեր՝ ու՞ր գնալ:

Ոչ պակաս վիճելի են արձանագրությունները՝ գրված քանդակագործ Արմո Առաքելյանի կողմից:

Բայց դա, իհարկե, հարցերի հարցը չէ, թեեւ մեծ գորավարի կերպարն աղավաղող այդ հուշարձանի հետագա գոյության նպատակահարմարությունն արժեք ենթադրել:

Շենքի աջ թեւում կառուցապատման, շինարարական աշխատանքներ էին կատարվում: Ուրախալի փաստ էր, մոտեցանք. տաթևացի Նորիկ Գրիգորյանն իր միջոցներով առանձնատուն-հյուրատան կից նոր հյուրատուն էր կառուցում՝ իր նախկին գոմի հիմքի վրա: Ինչ կարող ես ասել. մի կողմից նոր հյուրատան կառուցման երեւոյթը լավ է, մյուս կողմից էլ՝ գոմի հաշվին... Ինչ ուզում եք ասել, ես մտնում եմ իմ կարծիքին. գյուղում ապրող բնակիչը չպետք է վերացնի իր քանատները, իր գոմը՝ միայն նրա համար, որ ֆրանսիացին կամ ամերիկացին պիտի գան եւ մի տասը դոլար տան մեկ գիշեր օթեւնելու համար:

Գուցե Նորիկը մեկ այլ տեղ անասնագոմ էլ ունի, չգիտեմ, բայց կոնկրետ նրա առանձնատան կողքին դրա հետքերը չէրեւացին: Թող սխալված լինեմ, եւ սա էլ համարենք ընդհանուր դատողություն:

Տաթևացին չպետք է իր տնտեսությունը գոհաբերի եւ սպասի, թե երբ է իր հյուրատանը հայտնվելու ցանկալի գրոսաշրջիկը:

Բարի, թող հյուրատանը ել լինեն, թող կառուցեն, բարեհարմար դարձնեն մեկ-երկու սենյակ, բայց՝ ոչ իրենց տնտեսությունը վերացնելու գնով:

Տավոք, պետության խոստումները՝ հյուրատանը կառուցելու համար գյուղացուն օգնելու մասին, այդպես էլ չիրականացան: Դրա փոխարեն հայտնվեցին ինչ-որ վարկային ծրագրեր՝ ոչ բոլորին հասանելի եւ ոչ ցածր տոկոսադրույթով:

Նորիկ Գրիգորյանին բարի կառուցում մաղթենք եւ բացենք գյուղապետարանի դուռը:

Քարտուղարն ու զանձապահն ընդառաջ եկան, պատրաստական, լավ աղջիկներ էին, համայնքի զարգացման մասին բոլոր փաստաթղթերը տրամադրեցին, պատասխանեցին մեզ հետաքրքրող հարցերին:

Գյուղում ճոպանուղու կառուցումը հրաշալի, միջազգային նշանակության երեւոյթ է, դա բոլորս գիտենք: Բայց որքանով է այդ իրողությունը նպաստում գյուղի զարգացմանը կամ զարկ տալիս նրան: Տաթևացու սպասելիքներն այս հարցում եւս ի դերեւ եկան, եւ դա առաջինը երեւում է մեծաչափ արտագաղթով, դպրոցում օրեցօր պակասող աշակերտներով, փակվող դռներով եւ վաճառքի հանված տներով:

Ճոպանուղու կառուցումից հետո ինչու՞ն այդպես հանկարծակի փակվեցին եւ վաճառքի հանվեցին շատ տաթևացիների տներ: Առաջին տրամաբանությամբ՝ տաթևացիները ճոպանուղու կառուցումից հետո միամտաբար խաբվելով, թե՛ ահա-ահա Տաթևը կդառնա աշխարհի կենտրոնը, եւ ճոպանուղու առկայությամբ՝ աներեւակայելի թանկ գներով կվաճառվեն իրենց տները:

Արդյունքում՝ տներն արդեն չկան, արտագաղթել են, իսկ ոչ մի տուն առայսօր չի վաճառվել:

Բայց սա միայն առաջին հայացքից, որովհետեւ գյուղում արտագաղթը սկսվել է նախքան ճոպանուղին, եւ գյուղացու՝ հողից օտարվելն էլ նոր երեւոյթ չէ, եւ պատճառներն էլ շատ ու շատ են ու, ցավոք, բավականաչափ խորը:

Խոսենք միայն ներկայացված տվյալներով. գյու-



Սյունիքի ազգային-ազատագրական շարժման առաջնորդ Դավիթ Բեկի արձանը

վարժների, գյուղապետարանի քարտուղարի եւ զանձապահի հետ զրուցելով:

Մեկը մյուսից կարելոր մտահոգություններ, որ չգիտես էլ՝ որն առաջնահերթես, որին անդրադառնաս:

Նախ՝ հենց գյուղապետարանի շենքի մոտ մեզ դիմավորեց 18-րդ դարակազմի Սյունիքի ազգային-ազատագրական շարժման առաջնորդ Դավիթ Բեկի արձանը, որը, թող ներվի ասել, ասես մահարձան լիներ. քանդակագործի երեւակայության թռիչքն էր գուցե պակասում, գուցե գորավարի իրական ոգին ու շունչը չկային, ինչպես ասացին տաթևացիները: Ասես արձանն այստեղ պատահական

Նորիկ Գրիգորյանը նոր հյուրատուն է կառուցում:

Մարզի գյուղեր

Շրի 300 տնից այսօր փակ է կամ վաճառքի է հանված 150 առանձնատուն:

Նախկին տարիների համեմատ 1100-1200 բնակչություն ունեցող գյուղում այսօր ապրում է 852 մարդ, որից, տոկոսային հարաբերությամբ, մեծամասնություն են կազմում ծեփերն ու թռչակառուները:

Գյուղի միջնակարգ դպրոցում սովորում է 80 աշակերտ, տասը տարի առաջ՝ 280: Առաջին երկրորդ դասարաններում սովորում է երեք եւ հինգ աշակերտ:

Տաքեւում բնակիչները գրկված են անենօրյա եւ անվտանգ ջրից, բնական գազից եւ վաղուց նաեւ՝ մանկապարտեզից:

Ջրի մասին. խմելու ջրի ներհամայնքային ցանցը, որ կազմում է 5,5 կմ, գտնվում է անբավարար վիճակում: Ջուրը մատակարարվում է ընդհատումներով, ոչ մշտական, ցանցում սովորական երեւույթ են դարձել վթարները: Ջուրը գյուղ է մտնում վերահսկողությունից, լաբորատոր-սանիտար մաքրումներից եւ ստուգումներից զուրկ գյուղի բնական աղբյուրներից գոյացող ջրամբարից, եւ յուրաքանչյուր պահ կարող են վարակի մեծ բռնկումներ լինել: Ջրով լի բաժակի մակերեսույթին, տաքեւացիների ասելով, բուսական անց կանաչ տիղմափառ է հայտնվում:

Եղջտ է, տաքեւացիներից ջրի վարձավճար չի գանձվում, բայց դա ամենեւին էլ ուրախալի փաստ չէ: Գուցե վարձավճար գանձվելու դեպքում որոշակի բարելավումներ արվեին ջրի ներհամայնքային ցանցում, եւ ջրամատակարարումը հանձնվեր մասնագիտացված որեւէ կազմակերպության:

Քանի որ գյուղը զուրկ է բնական գազից, տաքեւացի տաքանալու եւ տունը տաքացնելու նպատակով փայտը ձեռք է բերում թանկ գնով՝ գյուղ այցելող փայտավաճառներից: Հարց՝ ինչու՞ տաքեւացին իր անտառամերձ տարածքներից ինքը չի բերում իր ձեռնակ փայտը, չէ՞ որ կառավարության որոշման համաձայն՝ այն (որոշակի քանակությամբ) անվճար կամ զեղչված է անտառամերձ գյուղերի բնակիչների համար: Պարզվում է՝ այդ օրենքն այստեղ չի գործում, իսկ գործելու դեպքում էլ՝ երիտասարդ ուժը հիմնականում արտագաղթել է, տարեցներն էլ ի վիճակի չեն այդ հեռավորության վրա ձեռնակ փայտը հայթայթել անտառում:

Ի՞նչ մակարդակի վրա է գյուղում զբաղվածությունը, քանի՞ աշխատատեղ կա, եւ երիտասարդությունն ինչո՞վ է զբաղվում:

Ձբաղվածության ցուցանիշն անմխիթար պատկեր է բացահայտում. գյուղում, այս կամ այն կերպ, զբաղված են 70-90 մարդ, որի մեջ ներառված են նաեւ ճոպանուղու քսան աշխատող, մի քանի հոգի էլ՝ դրսում, վանքի հարեւանությամբ տեղադրված առևտրի սեղանիկների մոտ:

Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, զբոսաշրջության կենտրոն Տաքեւում արտագաղթն ու գործազրկությունը ծաղկում են:

Երիտասարդները չեն ամուսնանում բավարար չափով նյութապես, կայուն եկամտով ապահովված չլինելու, աշխատանք եւ զբաղմունք չունենալու պատճառով:

Չափազանց լուրջ խնդիր է նաեւ աղբահանությունը: Տարեկան Տաքեւ գյուղ եւ Սատանայի կամրջի տարածք դիտելու եւ հանգստանալու է գալիս 80-90 հազար զբոսաշրջիկ, ովքեր սմվում են շրջակայքում, թափում աղբը, եւ առաջանում են աղբաբլուրներ: Կարելի է ասել, ոչ մեկը չի օգտվում տեղադրված աղբամաններից: Խնդիր է առաջանում աղբը մաքրելու, Գորիսից աղբահավաք մեքենա կանչելու, որը տեղով մեկ եւ ծախսատար

է, եւ ժամանակատար: Ստացվում է այնպես, որ միայն սեզոնային աղբը տարածքից հավաքելու եւ տանելու համար գյուղապետարանը պետք է լրացուցիչ աշխատողներ պահի իր սուղ միջոցների հաշվին

- Կողքից կարող է թվալ, թե ճոպանուղուց գյուղն ինչպիսի՞ միջոցներ է ստանում... Իրականում՝ պետականորեն որոշված է տարեկան 15 հազար դրամ հարկավճար, որը ծիծաղելի է, - ասում են գյուղապետարանի աշխատակիցները:

Ջարմանալու եւ տարակուսելու մեկ առիթ եւս՝ ինչպե՞ս պատահեց, որ զբոսաշրջության կենտրոն հանդիսացող Տաքեւի եւ շրջակա գյուղերի բնակչությանը նախապես խոստացված անվճար երթուղիության մասին հեքիաթները կարծ ժամանակ անց ճոպանուղու տնօրենության կողմից ոչ միայն չպահպանվեցին, այլեւ վերածվեցին խիստ շահավետ բիզնեսի՝ յուրաքանչյուր երթուղիով գյուղացուց գանձելով հազար դրամ գումար:

Ավելին, մեծ թվով տաքեւացիներ էլ մտածում են՝ մեզ պե՞տք է տասներկու ռուպեւում հասնել Հալիձոր, երբ կարող ենք մեքենայով քսան-քսանհիզոց ռուպեւում հասնել՝ արդյունքում չկորցնելով մեր հազար դրամ գումարը:

Ի՞նչ օգուտ է տվել ճոպանուղին գյուղին: Ըստ գյուղապետարանի աշխատակիցների՝ ինչ խոսք, օգուտն ակնհայտ է, քսան աշխատատեղ է բացվել, գյուղի բնակչության քսան տոկոսն օգտվում է կապից, տասը հյուրատուն է ստեղծվել, մի քանի հոգի առեստուր են անում վանքի մերձակայքում:

Բայց եւ այնպես... Փաստը մնում է այն, որ ճոպանուղու առկայությամբ գյուղում մանուկներ չեն ծնվում, աշակերտներ չեն ավելանում, գործազրկության գլոբալ հարց չի լուծվում, արտագաղթն էլ չի դադարում, գյուղը չի ամրապնդվում, վաճառքի հանված տներն թիվը չի պակասում:

Իսկ որպես զբոսաշրջության կենտրոն գյուղը զարգացման ինչպիսի՞ հեռանկարներ ունի:

Պատասխանը բուռն, խաբուսիկ եւ անորոշ էր՝ հիարկե, պետք է որ զարգացման հեռանկար ունենա գյուղը, բայց մշակված ծրագրերի իրագործումը ձգձգվում է:

Ընդհանուր առմամբ, Տաքեւ համայնքի՝ որպես տուրիզմի կենտրոնի, զարգացման հեռանկարը դեռ շատ մշուշոտ է:

Գյուղի տարեցների, հասարակ տաքեւացիների հետ զրույցի ժամանակ նրանց կողմից առաջնահերթ կարեւորվեցին գյուղի զագիֆիկացումը, աշխատատեղերի ապահովումը, խմելու եւ ոռոգման ջրամատակարարման, կոյուղու գծերի բարելավումը:

Կասկածներ կան, որ վանական համալիրի հիմքերը ողողված են բարձրադիր գոտուց հոսող ջրերով, եւ օրախնդիր են վանական համալիրի հիմքերի ամրապնդման աշխատանքները, որից հետո միայն կարելի կլինի շարունակել կառուցապատումը:

Սկսվել են համալիրի շրջակայքի ստուգումները, փոսեր են փորվում, սակայն ծայրը դեռ չի երևում:

Գյուղացիներին հուզում էր երիտասարդության արտագաղթը, ծնելիության ցածր մակարդակը՝ տարեկան երեք-չորս երեխա, մահացության բարձր, գրեթե կրկնակի տոկոսը՝ ութ-ինը մարդ: Այսպիսի դեմոգրաֆիկաները մարդու միակիս բնության նորմերն ու կանոններն է խախտում:

- Մենք արդեն մեծացել, ծերացել ենք, մեր ուժն ու եռանդը պակասել են, իսկ մեր անգործ ջահելները չեն կարողանում օգնել մեզ, - ասում են տարեցները, - շատ հաճախ նույնիսկ զրպանի փողը են մեզանից խնդրում: Տաքեւացին նաեւ համազգա-

յին դարդ ունի, ինչպես պարզվեց. նրան հուզում են ՀՀ հեռուստաթերթներից տրվող հաղորդումների անորակությունը, ցուցադրվող հայկական սերիալներով ու արեւմտյան, ամերիկյան կոյուղային ֆիլմերով քարոզվող անբարո արժեքները, մարդասպանությունն ու հանցագործությունները, անմարդկային այլեւայլ փոխարաբերությունները:

Գյուղացիներին հուզում էր նաեւ մի այսպիսի՝ որքան անսովոր, նույն-քան էլ շատ կարեւոր հարց. մի՞թե հնարավոր չէ բացառություն անել հեռավոր գյուղերի համար, եւ գյուղում մահացածին պարտադիր չհասցնել Գորիս՝ հերձման, առանց որի չի հատկացվում թաղման պետական նպաստը:

- Պատկերացրեք, սգատեր որքան փող պիտի ունենա, որ իր հանգուցյալին տարվա անբարեհարմար եղանակներին հասցնի Գորիս ու հետ բերի... Սա միանշանակ մաֆիա է եւ թալան, ո՞վ է ասել, որ միայն պարտադիր հերձման դեպքում պիտի հասանելիք գումարը տրվի, - վրդովված ասում են տաքեւացիները եւ շարունակում:

- Մի՞թե չի կարելի, ինչպես եղել է նախկինում՝ ոչ վաղ անցյալում, Գորիսից գյուղ այցելի հերձող բուժաշխատողը եւ գործը տեղում կազմակերպի՝ մեռածին ու սգատերերին Գորիս քարշ տալու փոխարեն:

Վանական համալիրի տեր հայրը տեղում չէր, իսկ ահա ինչ ասաց մեզ վանքի մոմավաճառը՝ գուցեւ թաքուն հուսախաբությամբ.

- Ճոպանուղին մեր գյուղի, առհասարակ Գորիսի փառքը տարածեց աշխարհով մեկ, Տաքեւը դարձավ աշխարհի նշանավոր վայրերից մեկը, դա անժխտելի ու մեծ երեւույթ է բուրիսի համար: Մյուս կողմից էլ, կարծես, նախքան ճոպանուղին մարդիկ գալիս էին սրբազան հավատով, այժմ այցելում են ասես իբրեւ ճոպանուղու մի շարունակություն, տեսարժան վայր: Գուցե են սխալվում են, չգիտեմ...:

Պարզապես ձեւական մոմ վառողների թիվն է մի քիչ շատացել: Ճոպանուղի այցելողների մի մասն էլ, նկատել են, վանք չի էլ մտնում. Հալիձորում կանգնեցնում են մեքենան, նստում ճոպանուղի, նորից վերադառնում Հալիձոր, այնտեղից էլ՝ Գորիս: Այստեղ հազար անգամ մտնողի համար էլ վանքը դարձյալ պիտի մնար առաջնահերթ ու հիմնական նպատակ:

Մոմավաճառի միտքը շարունակեմք՝ պատճառներից մեկն էլ դարձյալ Տաքեւի անբարեհարմար, չջեռուցվող, ժամանակակից պայմաններին չհամապատասխանող հյուրատներն են: Այցելու զբոսաշրջիկները գերադասում են Գորիսի բարեկարգ հյուրանոցներն ու հյուրատները...

Տաքեւի հյուրատների կառուցման գործում պետական օգնություն, ինչպես նշեցինք, չի ցուցաբերվում՝ հակառակ խոստումների:

Վանքի վանահոր սենյակի մի անկյունում դրված փայտի վառարանը հանգած էր, իսկ չորսկողմը թափված էին հավանաբար վառելու նպատակով այստեղ բերված անպետք թղթեր, սովորաբար թերթեր, փայտափուլու:

Տխուր էր անչափ, այսպես տեր հայր չեն պահում, որքան էլ հավատքի ու երեսակայության գիրկն ընկնեք: Եվ այն էլ՝ այսպիսի մի նշանավոր, պատմական վանական համալիրի, որ դարեր շարունակ եւ հիմա էլ անուրանալի հոգեբանական, բարոյական ներգործություն է ունեցել եւ ունենում ոչ միայն տարածքի, այլեւ՝ ողջ հանրապետության ազգաբնակչության վրա, մաքրագործել եւ վեհացրել, ակամա կրթել ու դաստիարակել մարդկանց հոգիները:

Վանքի քթի տակ բուսած երկա-

թակուռ կառույցը (ճոպանուղու կանգառը) որքան էլ վեհաշուք եւ տուրիստական-ամնրցելի, մի տեսակ տխրեցնում է: Այն գյուղացու, առավելապես տաքեւացու ոչ մի վերքին դեղ ու դարման չէ իրականում: Իսկ վանքի՞ն... որի հայրն իր անպատմելի անշուք եւ խոնավ սենյակում նստած հավանաբար մտածում է համալիրի կողերն ի վեր բարձրացող խոնավության, այնտեղ սրտանց աղոթող ու երգող իր՝ օրեցօր պակասող մանուկների եւ բիզնես-աշխարհում հավատն ու վանքի կարեւորությունը փրկելու մասին:

Այո, ճոպանուղու կառուցումը Գորիսի տարածաշրջանի այս անպատմելի հեքիաթային աշխարհում, իրոք, նույնքան աներեւակայելի ու գեղեցիկ մտահղացում էր՝ գեղագիտության, աշխարհաճանաչելիության, նպատակահարմարության եւ բոլոր առումներով:

Բայց (գիտեմ, մի քիչ խիստ բան են ասելու), չնոռանանք, որ դարեր ի վեր, դարեր առաջ էլ Տաքեւի վանական համալիրը, երբ վանքից բիզնես քանելու, աշխարհին ի ցույց դնելու մոլուցքը դեռ չկար, վանքը համալարան էլ ուներ, ճեմարան էլ եւ հրաշալի իրականացնում էր իր հոգեւոր առաքելությունը՝ ազգի համար, բոլոր աչքերից ու թաթերից հեռու...:

Ահա, թե ինչի՞ պիտի ծագեցնեք եւ այսօր էլ ինչը պետք է լինի մեզ համար առաջնահերթն ու անզգահատելին:

Մի բան հասկացա տաքեւացիների՝ տարեցներից մինչեւ մոմավաճառ, հասարակ գյուղացուց մինչեւ մանկավարժ, արած գրույցներից՝ մեզ «թաթա» մի տվեք ձեր կառուցած ճոպանուղով, մեր աչքերին էլ թոզ մի փչեք՝ իբր արդեն շա՛տ կարեւոր բան եք արել ու վերջ, էլ գործ չունեք անելու. գյուղը ծնվել է բազում հոգսերի տակ, օգնեք, թող գյուղը ոտքի կանգնի, թող ջահելները չարտագաղթեն եւ աշխատանք ունենան, այնպես արեք՝ երիտասարդները կարողանան ամուսնանալ եւ երեխաներ ունենալ:

Սա մի պարզ մեսիջ է տաքեւացուց՝ հոլված երկրի իշխանություններից:

Չ. Գ.

Ամեն դեպքում ես մնում եմ իմ կարծիքին. մեր պապերն ավելի վատ ժամանակներ են տեսել, առկա յաթաղան՝ գլխներին, բայց այդպես մասսայաբար չեն լքել հայրենի հողը, սա ժամտախտ է վարակ: Եթե դու չես մնում քո ծերացած ծնողի հոգսերը կիսելու, թեթևացնելու, գլուխ ջարդելով՝ հողը ծաղկեցնելու, հողը ամուր պահելու, ինչ մարդ ու քաղաքացի ես:

Այո, ես խիստ եմ այս հարցում: Հողը մշակիր, ամասուններդ էլ պահիր, ո՞վ է քեզ արգելում: Այն ժամանակ մանկապարտեզն էլ կլինի, ջուրն էլ, գազն էլ: Հեշտ բան չեն ասում, գիտեմ, բայց ու՞մ համար է հեշտ:

Միակողմանի ոչինչ էլ չի լինում, ինչպես եւ՝ մեղավորությունը:

Այս դժվար ժամանակները, տնտեսական եւ բարոյական այս օրհասը փորձություն են մեր ժողովրդի համար, բայց տեսնում եմ՝ ոչ միայն նա չի դիմանում, նաեւ ընդառաջ է վազում՝ օր առաջ գլուխն ազատելու հոգսերից, օր առաջ հեշտ ապրուստ գտնելու հույսով:

Գյուղացուն, զոնե, այսպես ասած, ծեծելով էլ չպիտի կարողանային իր հողից կտրել: Բայց ո՞չ. գյուղացին քաղաքացուց էլ առաջ է փախչում՝ անասուն, տուն ու տեղ վաճառելով, հողը կամովին լքելով ու հանձնելով. ու՞մ, մտածում է գոնե:

Այսպես՝ մինչեւ ու՞ր, ժողովուրդ: Մենք ունեինք հայրենիքի զգացողություն, սակայն չունեինք պետություն: Հիմա մեզ հավատացնում են, թե պետություն ենք կառու-

ցում, բայց կորցրել ենք հայրենիքի զգացողությունը: Գուցե դրա համար էլ դեգերում ենք...

Իսկ հիմա դառնում եւ օրհասի վերջին բառերով խոսեմ՝

մի բան հաստատ գիտեմ, գյուղի մարդ, եթե ողջ աշխարհին էլ ներվի հող ու հայրենիքից օտարվելը, քեզ երբեք դա չի ներվելու, որովհետեւ դու Աստու, երկնքի ու հողի հետ ամենօրյա զրուցող այն առաջին ու վերջին մարդն ես, ով դատապարտված է պահպանելու հայրենիքի զգացողությունը, ով դատապարտված է ամենքին ու երկրին՝ ծնող ու խղճ լինելուն, որովհետեւ քեզանից է ծնվել այն, ինչ հայրենիք ենք կոչում:

Այսպես է, ուրիշ ելք ու ճար չունես:

Դու ուղղակի պարտավոր ես ամուր կանգնել տեղում, որպեսզի քո մանուկները մի օր քեզ չհարցնեն՝ «Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք...», որպեսզի մի օր քեզ ցավ պատճառած անարժան-անառակ զավակներդ կարողանան դարձի գալ, նետվել գիրկը: Հավատա, նրանք էլ մոր փորից այս նոր հասարակարգը յուրացրած չիր ծնվել, եւ սա արդարացում չէ... ամենեւին: Եթե անգամ ավերախտ եւ ոսկու փայլից շլացած են եղել, եթե անգամ պարտքից եւ պատասխանատվությունից շատ են թեթևացել, եթե անգամ երես են թեթել իրենց չորուկ-չորացած մորից: Եվ դրա մեջ քո մեղավորությունն էլ կա, հավատա, որովհետեւ դու չես պահանջել, գլուխ չես ջարդել, չես առաջարկել ու չես փորձել հազար անգամ, ծնողի իրավունքով չես քաշել զավակիդ ականջը:

Որովհետեւ կարծել ես՝ դու կարեւոր չես, կարծել ես՝ դու գյուղացի ես, դու էական չես: Որովհետեւ դու կամովին լքել ես տունը եւ մեկնել աշխարհի սառը ծերանոցներ՝ մոռանալով, որ ծնողը չի լքում, որ ծնողին դա չի ներվում, որ ծնողը եթե մեռնում էլ է, ապա մեռնում է ծառի պես, իր հողին կանգնած ու նրան պատվար:

Իշխանությունները կզան ու կերթան՝ իրենց բազում ու բազում սխալներից անոթահարվելով, զղջումներով, շտկումներով: Բայց դու իրավունք չունես խելառվելու, հողիդ վրա երերալու, կորցնելու քո՝ ծնողիդ բարոյականությունը, եթե անգամ ողջ աշխարհը բարոյալիք դառնա:

Որովհետեւ դու հողի մարդ ես, դու հասարակ ու անեական՝ ...արեւի՛ պես մարդ ես, որովհետեւ դու երկրիդ քաշող եզն ես, որովհետեւ դու հաց եւ ու հայի հացի ծխտ եւ դարավոր թոնիրն ես:

Մնա, որ քո դառնատոհմ օուլսը մի օր հասնի ու այնպե՛ս մրձռացնի քո՝ ակոսից ու հողից օտարված, քեզնից թեթևատորեն երես թեթած, քեզ ուրացած՝ զավակիդ աչքերը, որ դրանք լայն բացվեն, եւ հասկանա, որ ակոսի մեջ իրենց քաշող ե՛զն է մեռնում, իրենց ծնո՞ղն է մեռնում, որ ծնողը էլ այդպես՝ մի օր վերցնել ու մեռնել գիտի, որ հողի ու հայրենիքի ծո՛ւխն է մեռնում, որ՝ բավ է:

Որովհետեւ էլ չհասկանալու տե՛ղ չկա... Որովհետեւ դու ժողովուրդ ես, որից այն կողմ չկա բարձր երկինք, եւ չկան աշուղ հավքեր, առույգ ջրեր...

Որովհետեւ հայ գյուղացուց այն կողմ չկա հայրենիքի զգացողություն, ուստի եւ չկա երկիր, չկա պետություն, չկա ոչինչ:

Աղոսը մի լքիր, քանի դեռ կարող ես, հայ գյուղացի, որովհետեւ քո մեռած ոսկորներից էլ դասեր ու իմաստություններ քաղելու ժամանակը մոտ է, որովհետեւ դու հայի խղճն ես, առանց որի այս հացը երբեք չի ուտվելու:

Եվ սա ոչ ճառ է, ոչ էլ ամենեւին՝ գեղեցիկ բառեր, սա իրական օրհաս է՝ կախված բոլորիս գլխին:

ՍՈՒՍԱՆԱ ԲԱԲԱԶԱՆՅԱՆ

Հայրենագիտություն



ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ. «Հին Հարժիսի փարածքի հուշարձանները բացառիկ են. դա իսկապես մի քաղաքակրթական բնօրրան է, որը ոչնչով չի զիջում... Մեզոամերիկայի քարակերտային կոթողներին»

Սյունիքը Հայկական լեռնաշխարհի այն կարեւորագույն վայրերից է, որն ունի պատմական հարուստ անցյալ: Որպես պատմաշակութային մարզ՝ այն վաղուց է հետաքրքրում պատմաբաններին, հնագետներին, ճարտարապետներին, ճանապարհորդներին: Սյունիքում փաստագրված են Հայկական լեռնաշխարհի՝ հնագույն մշակույթներին պատկանող հնագիտական հուշարձանները մինչև միջնադար եւ դրանից հետո, նաեւ ներկայիս իրականության հետ կապված փաստերը: Այդ առումով ուշադրության կենտրոնում է եղել Սյունյաց աշխարհը, որն իր սահմաններով ժամանակ առ ժամանակ փոփոխության է ենթարկվել: Ըստ Աշխարհագրոյցի՝ այն հզորագույն մի աշխարհ է եղել Մեծ Հայքում, եւ տարածքի ուսումնասիրությունները շարունակվում են մինչ օրս:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի հնագիտության եւ ազգագրության ամբիոնի վարիչ, հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի ղեկավար Հայկ Ավետիսյանը ներկայումս ղեկավարում է «Պատմական Սյունիքը Բ.ա. 3-1-ին հազարամյակներում» ծրագիրը, որ վերաբերում է Սյունիքի բրոնզեդարյան ժամանակաշրջանի մշակույթին՝ ըստ հնագիտական նորագույն տվյալների, որը գիտության պետական կոմիտեի կողմից է ֆինանսավորվում, եւ այդ ծրագրի շրջանակներում երկու տարի շարունակ հետազոտման աշխատանքներ են կատարվելու: 2013 թվականից են գործնականում այդ աշխատանքներն իրականացվում, բայց դա չի նշանակում, որ Սյունիքի տարած-



քում մինչ այդ ոչինչ չի արվել: Բացի այն ավանդական հնագիտական հավաքածուներից, որոնք աշխարհին հայտնի են, նրանց կողքին կան նաեւ հնագիտական հուշարձաններ, կոթողներ, որոնք դեռեւս ուսումնասիրված չեն եւ հայտնի չեն:

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտներ Արսեն Բոբոխյանի, Արտակ Գնունու եւ հնագիտության ու ազգագրության ինստիտուտի ասպիրանտի հետ միասին են կատարում փաստագրման աշխատանքները: Հայտնաբերված նյութերը մշակվում են պետական լաբորատորիայի հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայում. «Աշխատանքները շարունակական պիտի լինեն, համենայն դեպս մենք մեկ տարի դեռ պիտի աշխատենք, եւ նոր նյութերը, որոնք մենք արդեն փաստագրել ենք, կուսումնասիր-

վեն, եւ եթե ֆինանսական միջոցները թույլ տան, հետազոտման ծավալները կմեծացնենք եւ հնարավորություն կունենանք ամբողջացնելու հնագույն քարակոթողների պատկերը»:

Այցելելով մի շարք բնակավայրեր, այդ թվում նաեւ Հարժիս (Յայջի)՝ դիտարկումներ, ուսումնասիրություններ են կատարել եւ փաստագրել քարի դարից մինչև միջնադար ընկած ժամանակահատվածի հնագիտական հուշարձաններ եւ առանձին կոթողներ, որոնց մեջ մեծ դեր ունեն մեհիկները՝ հսկայական քարակոթողները, եւ վիշապաքարերը, որոնք շատ հետաքրքիր են եւ յուրօրինակ դրսեւորում ունեն Հայկական լեռնաշխարհի տարածքում:

Հավաքելով եւ փաստագրելով տեղում գտնվող բազմաթիվ նմանա-

տիպ գտածոներ՝ պատրաստվում են հրատարակել մենագրություն, որ հավանաբար մեկ տարի հետո ընթերցողի սեղանին կդրվի: Ծրագրի շրջանակներում փաստագրել են Հարժիսի եւ հարակից շրջանների, պատմական Սյունիքի որոշ այլ հատվածների, մասամբ Արցախի, Գեղարքունիքի մարզի (Սելիմի լեռնանցքով մինչև Սեւանի ավազան) հուշարձանները: «Սա իսկապես շատ հետաքրքիր եւ կարեւոր է: Վիշապաքարերի, հնագույն քարակոթողների, մեհիկների, ժայռապատկերների հայտնաբերումը կապված է մեր ինքնության, ակունքների, Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների նախաքրիստոնեական մտածելակերպի, նրանց պատկերացումների հետ, եւ այսօր ամբողջ աշխարհում նման տիպի ուսումնասիրությունները շատ են կարեւորվում», - նշեց Հայկ Ավետիսյանը:

Հարժիսի տարածքում կատարված ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ այնտեղ եղել են տարբերույթ հնագիտական մշակույթներ, որոնք ընդհանուր առմամբ տեղավորվում են Հայաստանի եւ Առաջավոր Ասիայի մեջ բարե դարից մինչև միջնադար ընկած ժամանակահատվածում: «Հարժիսի տարածքը ժամանակին ուսումնասիրվել է մասնագետների կողմից, եւ մենք այդ հետազոտված աշխատանքները նաեւ նոր հուշարձաններ: Գտանք բազմաթիվ նմանատիպ հուշարձաններ՝ մեհիկներ, քարակոթողներ, որոնք մինչ օրս հայտնի չէին: Հրատարակվելիք գրքում կլինեն այդ նյութերը եւ դրանց վերաբերյալ որոշակի տեղեկատվություն, որը, կարծում են, քիչ թե շատ կամբողջացնի այդ տարածքի հնագիտական մշակույթի պատկերը եւ հետագա ուսումնասիրողների համար ուղեցույց կդառնա», - նշեց հնագետը:

Վերջինիս տեղեկացմամբ՝ արտասահմանցի հետազոտողները նույնպես հետաքրքրված են Հայաստանի տարածքի հնագիտական

իրողություններով, եւ պետիանալ-սարանը տասից ավելի երկրների համալսարանների, գիտական կենտրոնների հետ է համագործակցում:

«Հին Հարժիսի տարածքի հուշարձանները բացառիկ են. դա իսկապես մի քաղաքակրթական բնօրրան է, որը ոչնչով չի զիջում, եթե մի քիչ չափազանցված, Մեզոամերիկայի քարակերտային կոթողներին, որոնք ինկերի, ացտեկների քաղաքակրթության են բնորոշ, իսկ դարավանդներին կառուցված տները, եթե ուշադիր նայենք, հայկական վաղ ճարտարապետության նմուշներ են: Հարժիսում կան քարե կիկլոպներ, բազմաթիվ հնագիտական օբյեկտներ, որոնց ուսումնասիրությունը կարող է անակնկալներ մատուցել եւ հնագիտության համար կարեւորագույն փաստեր բացահայտել», - պարզաբանեց հնագետը:

Նրա համոզմամբ՝ Հարժիսը յուրօրինակ հնագիտական անկլավ (երկրի ներսում գտնվող տարածք) է, որպիսիք Հայաստանում շատ կան, եւ որի ուսումնասիրությունն ու այնտեղի հնագիտական նմուշների պահպանումը բացառիկ նշանակություն ունեն մեր պետության համար, քանի որ դրանց շնորհիվ կարելի է նաեւ այդ տարածքները զբոսաշրջային կենտրոններ դարձնել, ինչու չէ, նաեւ արհեստանոցներ ստեղծել, որտեղ այցելուները կարող են ծանոթանալ հնագույն արհեստներին:

Հնագետը նշեց, որ այդպիսի՝ դեռեւս չհետազոտված վայրեր կան նաեւ Արեւմտյան Հայաստանում, որ, կարծում ենք, երբեւէ հասու կլինի մեզ: Պարզապես այդ տարածքները պետք է հետազոտել, հանրահռչակել, աշխարհին ներկայացնել տեղում հայտնաբերված հնագիտական մշակութային արժեքները, որոնք մեր ինքնության կարեւորագույն առավելապես են:

Գիտական-հնագետը մշտապես հնագիտական օբյեկտների ոչնչացման մտավախություն

ՄԱՅՏԵԱՆ **Հայկ Ավետիսյան.** ծնվել է 1956թ. Երեւանում: 1973թ. ավարտել է Երեւան քաղաքի N 118 միջնակարգ դպրոցը, ապա ուսումը շարունակել է ԵՊՀ պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1983թ.: անմիջապես ընդունվելով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրա՝ հեռակա ուսուցմամբ: 1989թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն: 2003թ. պաշտպանելով դոկտորական ատենախոսություն՝ ստացել է պատմական գիտությունների դոկտորի աստիճան:

1985թ.-ից պաշտոնավարել է Երեւանի պետական համալսարանում: 1995-2003թթ. եղել է ԵՊՀ գիտքարտուղար, 2004-2009թթ.՝ պատմության ֆակուլտետի ղեկավար, իսկ 2009թ.-ից մինչ օրս՝ հնագիտության եւ ազգագրության ամբիոնի վարիչ:

Հայկ Ավետիսյանը հայտնի է որպես հմուտ հնագետ: Գործում մասնակցություն է ունեցել Թալիմի, Օշականի, Արեւիկի պեղումներին, ղեկավարել Արագածի, Արամուսի, Այգեշատի հնագիտական արշավախմբերը: Նրա գրչին պատկանող Արարատյան դաշտի բիսպական խեցեղենի տիպաբանությունը մի կողմից ունի գիտական նշանակություն՝ ընդգրկված նյութի բազմազանությամբ պայմանավորված, մյուս կողմից՝ լրջագույն մեթոդոլոգիական ձեռնարկ է. վերջինիս նյութի ուսումնասիրության կարգը, հատկանիշների ամբողջական ցանկը կարող են ծանոթակել տվյալ ժամանակաշրջանի զանգվածային նյութն ուսումնասիրողին:

Հայկ Ավետիսյանը հեղինակ է Հայաստանի եւ Առաջավոր Ասիայի՝ Բ.ա. առաջին հազարամյակի կեսի՝ մշակույթին նվիրված հրատարակումների: Այս հետազոտություններում նա, հմտորեն համադրելով հնագիտական եւ պատմագիտական նյութը, հանգել է մի շարք կարեւորագույն եզրակացությունների: Մասնակցել է հանրապետական եւ միջազգային (Գերմանիա, Իտալիա, Իսպանիա եւ այլն) մի շարք գիտաժողովների:

Հարավային Կովկասի նմանօրինակ հաստատությունների շարքում իր ուրույն տեղն է զբաղեցնում պրոֆեսոր Հայկ Ավետիսյանի ղեկավարությամբ արյունավետ աշխատանքներ իրականացնող ԵՊՀ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիան: Նրա ջանքերով մեծապես ընդլայնվեցին ԵՊՀ պատմության ֆակուլտետի եւ, մասնավորապես, հնագիտության եւ ազգագրության ամբիոնի միջազգային կապերը (Ինստրուկտի, Կալիֆորնիայի համալսարաններ): Այդ կրթօջախների մասնակցությամբ պետք է ներգրավվեն իրականացվել Կոտայքում, Արագածոտնում, Վայոց ձորում եւ այլուր:

Մի շարք գիտական խորհուրդների անդամ է, միջազգային հնագիտական արշավախմբերի գիտական ղեկավար, գիտական ասնագրի խմբագիր: 2006թ. արժանացել է Ֆրիտյոֆ Նանսենի ոսկյա հուշանդամի:



ՄԱՍԻՆՈՒՄ

ՄԱՍԻՆՈՒՄ

«Սիսիան. կյանք կա՞ այսօր, կյանքը մեռած է...»

Ներհասարակական մայրաքաղաք

ՍԿԻԶԲԸ ԷՋ 1

Ամբարեկարգ ու դարուկոսերով ճանապարհները, քանդված փողոցներն առաջին բանն են, որ աչքի են զարնում նաեւ համայնքում շրջելիս: Օրվա՝ աշխատանքային ամենազբաղված ժամերին քաղաքի կենտրոնական հրապարակում եւ այլ փողոցներում աչքի է ընկնում տարբեր տարիքի տղամարդկանց խումբերը: Քաղաքը հավաքված լինելը, որն այսօր քիչ թե շատ աշխատատեղ ունեցող քաղաքներում դժվար է հանդիպում. մարդկանց գործազուրկ լինելու եւս մեկ խոսում պատկեր... Սոտեմուն ենք մի խմբի, երիտասարդներից մեկը համաձայնում է գրուցել ու պատմում, որ անցած տարի է թուլեցն ավարտել, աշխատանք է փնտրում, դեռ չի գտել...

Քաղաքում հիմնականում մանրածախ առևտրի կետեր են, հատուկ վայրերում առևտրի կենտրոնացման ու խոշորացման միտում, ինչպես այլ քաղաքներում, չի նկատվում: Հիմնականում տարիներով գործող նույն փոքր խանութներն են՝ գրեթե բոլոր կենտրոնական շենքերի առաջին հարկերում, ամեն քայլափոխի հանդիպում են նաեւ ոչ ակնհայտ մետաղյա կրպակները: Էլի համեմատության մեջ նկատենք, որ այլ քաղաքներում, եթե «գործերը լավ են գնում», հնարավորության դեպքում մարդիկ գերադասում են փոխարինել դրանք կայուն քարե շինություններով. ուրեմն այստեղ փոքր բիզնեսի զարգացման առումով եւս լավատեսություն չի կարող: Ի դեպ, շատ են հանդիպում նաեւ նախկին փոքր բիզնեսից ազատված տարածքներ, որոնք վաճառվում կամ վարձով են տրվում:

Որպես քաղաքի կյանքում փոփոխություն եւ նոր արված գործ մեզ հանդիպած սիսիանցիները հիմնականում մատնանշում էին նոր կառուցվող մարզական համալիրը եւ դրա կողքին կառուցվող ու զեղեցիկ նստարաններով նոր այգին:

Մեր հարցախոյզի մասնակից սիսիանցիները խուսափում են ներկայանալ, չեն խոսում նաեւ քաղաքականությունից, իսկ քաղաքապետից գոհ են հիմնականում լուսավորության ու քաղաքի մաքրության համար: Եվ քանի որ շատերի հետ խոսելիս հնչած խնդիրներն ու բարձրացված հարցերը նույնն էին, եւ հիմնական տպավորությունը լավատեսության պակասն էր, ընդհանրացնենք դրանք:

Հիմնամյա մի կին քաղաքի ամենամեծ խնդիրը համարում է աշխատատեղերի բացակայությունը: Նրա ասելով՝ դա ստիպում է, որ տղամարդիկ, հատկապես երիտասարդները, գումար վաստակելու համար Ռուսաստան մեկնեն: «Ինքս աշխատանք ունեմ, բայց երեխես չունեմ: Որդիս ինստիտուտն ավարտել է իսկույն դուրս գնացել»: Նշում է, որ այս տարի ավելի ծանր է, քանի որ նորմալ բերք չկար: Իսկ իր համաքաղաքացիների ապրելու կերպը պարզապես գոյատևել է համարում. ամեն մեկը մի կերպ ստեղծում է... «Շատ-շատ են Սիսիանից դուրս գնում, հիմնականում՝ ՌԴ կամ որտեղ որ աշխատանք կլինի: Վերադառնա՞նք ինչո՞վ ապրեն... Այստեղ մի քիչ ապահով կարող են համարվել զինվորականները»:

Ելիսի ունենա եւ աշխատի պատճենել այդ վայրը: Ներկայումս կատարված փաստագրման աշխատանքներն օգտակար են այնքանով, որ հայտնաբերված նյութերը կմտնեն հատուկ պահպանման ցուցակ:

Ծրագրի ղեկավարը կարելուրեց պետության աջակցությունը դրանց հետազոտման եւ պահպանման գործում: Կարելու է նաեւ ազգաբնակչության գիտակցական մակարդակն այդ հարցում: Հողամասում վարուցանք անելիս, եթե ինչ-որ իր են գտնում, նրանք պիտի անմիջապես դիմեն համապատասխան մարմիններին, նախելառաջ հուշարձանների պահպանման մարզային կառույցին՝ բնավ չուներանվոլ այն մտավախությունը, որ հողը կարող են խլել ձեռքից: Ավելի՞ն՝ դրա փոխարեն գյուղացին ավելի մեծ հողատարածք կստանա: Պետությունն ունի բոլոր իրավունքները համապատասխան գոտում ուսումնասիրության թույլտվություն տալու: Բացի մարդկանց իրազեկությունից՝ կարելու է նաեւ համապատասխան կառույցների հետեւողական գործունեությունը՝ հնագիտական արժեքը պահպանելու հարցում:

Ծրագիրը հանրապետական է եւ ֆինանսավորվում է գիտության պետական կոմիտեի կողմից: Որպես իրավաբանական կառույց՝ նրանք կարող են մտնել հետազոտման տարածք, նույնիսկ տեղում կատարվող շինարարական ու գյուղատնտեսական աշխատանքները կանգնեցնել՝ հետազոտություն անելու համար:

Հնագիտական պեղումները տեղում լուծում են նաեւ սոցիալական հարց՝ որոշ ժամանակով աշխատանքով ապահովելով մարդկանց: Այս առումով Հարժիսում պեղումներ չեն կատարել, այլ միայն փաստագրման աշխատանքներ, ծրագիրը շարունակվելու դեպքում հնարավոր են նաեւ պեղումներ:

Հուշարձանը կարող է փոքրիկ կորոլ լինել, բայց իր տեսակով լինել եզակի եւ այնքան տեղեկատվու-

թյուն տալ, որ հնագիտության համար իսկական բացահայտում լինի:

«Կան վիշապաքարեր կամ մեհիիրներ, որոնք հետազայում դարձել են խաչքար: Օրինակ՝ հայտնաբերել ենք Ք.ա. 2-րդ հազարամյակից եկած կորոլ, որ 13-14-րդ դարերի խաչքարի է վերածվել՝ հայերեն արձանագրությամբ: Սա վկայում է այն մասին, որ մեր նախնիների նախաքրիստոնեական ինքնության բաղադրիչ տարրը դեռեւս միջնադարում բացահայտվել է եւ այնքան արժեքավոր է եղել, որ խաչքար է դարձել: Հրաշալի մեհիիրներ կան Հարժիս տանող ճանապարհին, որոնցից մի քանիսը պահպանված է, մի քանիսը՝ կտորված, բայց դրանք փաստագրվել են: Նոր հայտնաբերվածները նույնպես կմտնեն համապատասխան ցանկի մեջ եւ կդառնան հատուկ պահպանության տարածքներ», – պարզաբանեց հնագետը:

Վերը նշված ծրագրով արտասահմանցի հետազոտողներին ներառելը նախատեսված չէ, բայց Սյունիքի մարզի տարածքում ժայռապատկերների ուսումնասիրությանը գերմանացիներն են զբաղվում (պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, հնագիտության ինստիտուտի ավագ գիտաշխատող Արսեն Բոբոխյանն է ղեկավարում այդ աշխատանքները), ֆրանսիացիները մասնակցել են Սիսիանում կատարվող պեղումներին, որ ղեկավարում էր հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանը, եւ մնաստիպ այլ հետազոտությունների, այսինքն՝ արտասահմանցի հետազոտողները լրջորեն հետաքրքրված են Հայաստանի հնագիտական օբյեկտներով:

«Մի բուռ հնագետներով հսկայական մեզաաշխարհ ենք ուզում բացել՝ մեր արմատները ճանաչելու, հասկանալու եւ ի վերջո եկող սերունդներին, որ պետք է նախելառաջ ճանաչի իր պատմական արժեքները, դաստիարակելու համար», – եզրափակեց Հայկ Ավետիսյանը:

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Իսկ քաղաքապետից գոհ է. «Եթե դիմում ես, ինչով կարողանում, օգնում է, բոլորս էլ գիտենք, որ բուռնում այդքան հնարավորություն չկա: Հիմա ողջ Հայաստանում է այդպես. մարդիկ ինչքան կարողանում, անում են, իսկ քաղաքն ամեն օր մաքրվում է, տեսեք նաեւ՝ ինչ զեղեցիկ այգի են սարքում»:

Կրպակում ծաղկի վաճառքով զբաղվող տարիքով մի տղամարդ հանում է ցույց է տալիս պարտատերերի ցուցակով տետրը. նույնիսկ նման առևտուրն իր համաքաղաքացիները պարտքով են կատարում. «Մարդկանց ընդառաջում ենք, բա ի՞նչ անենք...»: Մեր այս գրուցակիցը եւս Սիսիանի համար մեկ ցավոտ հարցը աշխատատեղերի բացակայությունն է համարում. «Տեղ չկա աշխատելու, շատերը պարտք ման են գալիս... Երիտասարդության մեծ մասն այստեղ չէ: Հենց իմ որդին, մանկավարժ է, Սիբիր է գնացել... Շատ են նման ընտանիքները: Իսկ այստեղ մնացածներն էլ որը հող ունի, որը չունի... Յուլա են գնում, այս տարի էլ ոչ խնձոր կար, ոչ՝ պղպուկ...»: Ծաղկավաճառը բողոքում է քաղաքի քանդված ճանապարհներից, գոհ է սակայն, որ քաղաքապետը համայնքում լուսավորության եւ աղբահանության գործը կազմակերպում է: Քաղաքականության մասին հարցերին չի ուզում պատասխանել. «Քաղաքական գործիչ չեմ, ոչ էլ մասնակցում եմ նման բաների... Երկրի իշխանությունը չգիտի՞ ինչ է կատարվում: Իմ ասելով չի...»: Խոսելով հենց իր օրինակով մանր ու միջին բիզնեսն այստեղ զարգացնելու մասին՝ մեր գրուցակիցն ասում է, որ գումար ու ներդրումներ են պետք դրա համար, իսկ այսպես, այն էլ ոչ կանխիկ առևտրով, իրենք հազիվ օրվա հացի հոգս են հոգում:

Նույնկերպ պարտքի տետրն է ցույց տալիս մրգի ու բանջարեղենի առևտուր անող հիսուսն անց մի կին: «Կյանք կա՞ այստեղ, – ինքն իր հերթին հարց է ուղղում, – կյանքը մեռած է, շատ վատ է ապրում սիսիանցին. ո՛չ գործարան կա, ո՛չ այլ աշխատատեղ, մարդիկ ճռռում են վարկերի տակ: Ա՛յ, իրենց նախիր (ցույց է տալիս կողքի չգործող շատրվանների տարածքում խումբ-խումբ հավաքված ու թղթախաղով զբաղված տղամարդկանց)»: Ասում է, որ այդ ժամի դրությամբ (կեսօր էր) դեռ ոչ մի դրամի առևտուր չի արել, իսկ պարտքով տված ապրանքի գումարներն էլ մեծ դժվարությամբ է հավաքում. «Ժողովուրդը վճարունակ չէ, չի կարողանում տալ զոնե իր կերածի գումարը»: Նա բողոքում է նաեւ ճանապարհներից, թե քաղաքի ներսի, թե՛ Սիսիանը գյուղերին կապող: Դժգոհում է նաեւ, որ քաղաքը գյուղերին կապող տրանսպորտ չկա, իսկ քանի որ ճանապարհները վատ են, մասնավոր տրանսպորտի տեղերը խուսափում են երթելու: «Ճանապարհի փոսերում անձրեւաջրեր են հավաքվում, անցնող վարորդն էլ լրիվ ցեխաջրով է ողողում...»:

Խոսելով արտագաղթից՝ երիտասարդ մի կին տագնապ է հնչեցնում նույնիսկ ժողովրդագրական խնդրի մասին. «Ոչ մեկն իր ապագան Սիսիանում չի տեսնում, մանավանդ՝ երիտասարդները: Մի չնչին շանս ունենալիս՝ ամեն ինչ թողնում-հեռանում են: Թող քաղաքում այնպիսի մի ձեռնարկություն հիմնեն, որ զոնե երիտասարդները մնան այստեղ, աշխատեն: Նույնիսկ

արդեն տղաներ չկան, որ աղջիկներն ամուսնանան, շատերը դրսում են»:

Նրա պատմելով՝ վերադառնալ չեն ուզում նաեւ մայրաքաղաքի բուհերում ուսանելու մեկնած սիսիանցիները: «Ձգտում են աշխատանք գտնել այնտեղ, այստեղ վաստակածդ իսկի ամսվա ծախսած գազի գումարը չէ»: Իսկ ցուրտ այս սեզոնում, նրա ասելով, էլ ենթադրաբար ու գազի թանկացումից հետո մարդիկ նույնիսկ ժամանակակից վերանորոգված բնակարաններում սկսել են նորից փայտի վառարաններից օգտվել:

Խոսելով սիսիանյան աշխատաշուկայի նորություններից՝ մեր գրուցակիցը նշում է, որ ավելացել է միայն վերաբացված տրիկոտաժի ֆաբրիկան, իսկ այստեղ էլ 40-60 անց կանայք են աշխատում. «Էլի երիտասարդներ չկան, բնականաբար, նման աշխատանքի փորձ ունեցողներն են ընդունում, մյուս կողմից էլ, ասենք, համալսարան ավարտած աղջիկը չի գնա կար անի»: Մշակութային կյանքի, ժամանցի վայրերի մասին խոսելիս այս կինը գլուխն է տարուբերում, ասում է ընտանիքի հետ հանգիստն ու ժամանցը կազմակերպելու վայրեր չկան. «Իսկ երեխաների համար ժամանցի վայր կար, բայց այնքան շատ են հարկային պարտավորությունները, որ փոքր քաղաքում նման բիզնես չես կարող զարգացնել, ցավոք, փակվեց...»:

Քաղաքի կենտրոնական վայրերից մեկում հավաքված պապիկները, իրենց ապրուստից խոսելիս, կատակում են. «Ի՞նչ ասենք. եթե ասենք լավ չենք ապրում, մենք մեզ «ծախում ենք», եթե ասենք լավ ենք ապրում, դա ճիշտ չի...»: Իսկ նրանց հուզողը նախելառաջ ոչ թե համասիսիանյան, այլ զուտ իրենց անձնական սոցիալական խնդիրներն են համատարած թանկացումների ֆոնին թոշակների բարձրացումն են ուզում: «Ցուրտ է, չգիտենք էլ տունն ինչպես տաքացնենք», – ասում է պապիկներից մեկը: Իսկ Ռուսաստանում բնակվող ցածրները, ասում է, իբր կարողանում են իրենց պահել, որ այստեղի մեծահասակներին էլ օգնեն: Ու այդ պահին որպես օրինակ մոտ է կանչում հեծվում կանգնած իր հարեւանի որդուն, թե՛ Ռուսաստանից է եկել, խոսեցրու: Երիտասարդն ասում է, որ աշխատում է Ռուսաստանում, ժամանակավոր է եկել, էլի պիտի գնա: Այնքան էլ գոհ չէ նման կյանքից, եւ եթե կարողանար այստեղ աշխատանք գտնել, չէր մեկնի:

«Քաղաքում վիճակ չկա, քանդված է, հույս էլ չունենք, թե մի բան կփոխվի, մենք հույս ունեցել ենք 1975-85 թվականներին», – ասում է մեկ այլ պապիկ, որը քաղաքականության մասին հարցին չի պատասխանում, ասում է վախենում ենք:

Ի դեպ, կանգառներից մեկի մոտով անցնելիս եւ տեսական ժամանակ անց վերադառնալիս նկատեցինք, որ նույն մարդիկ դեռ կանգնած են այդտեղ: «Եթե մի քանի րոպե ճառեք այստեղ, կհասկանաք մեր հոգսերը, – փոխանցեց միջին տարիքի մի կին, – ի՞նչ կա այստեղ, մի մեծ հետամնաց գյուղ է»: Տրանսպորտի սպասող երիտասարդ մի կին էլ բողոքեց, որ ողջ քաղաքում մեկ միկրավտրոս է աշխատում, որը հստակ գրաֆիկ չունի, եւ իրենք կանգառում սպասում են՝ չգիտեն, թե դեռ ինչքան...

ԱՐՄԻՆԵ ԱՎԱԳՅԱՆ

Սպուզման արդյունքներն առելորային գաղտնիք են և ենթակա չեն հրապարակման

Արձագանք
«Այունյաց երկիր» 2014թ. նոյեմբերի 8-ի N28-ում տպագրվել է «Աննախաղեպ սկանդալ «Վիվասելի» Կապանի կառույցում»

վերտառությամբ հողվածք: Եվ ահա ստացվել է «Վիվասել-USU» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանի արձագանքը, որն ամբողջապես ներկայացնում ենք ստորև:
«Այունյաց երկիր» թերթի գլխավոր խմբագիր Սամվել Լազրի Ալեքսանյանին

Հարգելի պարոն Ալեքսանյան Ի պատասխան Ձեր 22.10.2014թ-ի հարցմանը հայտնում ենք, որ սույն թվականի հոկտեմբեր ամսին «Վ-Տելեկոմ» ՓԲԸ-ն Այունիքի մարզի սպասարկման կենտրոններում իրականացրել է տարեկան պլանային ստուգումներ, որոնց արդյունքները հանդիսանում են առելորային

գաղտնիք և ենթակա չեն հրապարակման, հիմք՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդված:

Միաժամանակ հայտնում ենք, որ նախատեսված ստուգումներն անցել են բնականոն հունով և արտակարգ դեպքեր չեն գրանցվել:

Շնորհակալություն ենք հայտնում մեր կազմակերպության նկատմամբ Ձեր կողմից ցուցաբերած ուշադրության համար և պատրաստակամություն ենք հայտնում սիրով պատասխանել բոլոր հետաքրքրող հարցերին ՀՀ օրենսդրության թույլատրելիության սահմաններում:

**Հարգանքով՝
Ռալֆ Յիրիկյան
Գլխավոր տնօրեն**



Տանձապափցի բրուտի պատրաստում կարասը 310 տարեկան է

Բացառիկ ցուցանուշ

Ամսահման էր ուրախությունս, երբ Շինուհայր գյուղի մի պատվար-ժան ընտանիքում տեսա Տանձապափուկ պատրաստված ու բրծված մի սքանչելի կարաս: Այն Շինուհայրի միջնակարգ դպրոցի վաստակաշատ ուսուցիչ, դպրոցի նախկին տնօրեն, մեր հարգարժան բարեկամ Սերոբ Առաքելի Երեմյանի սեփականությունն է և պահվում է նրա մառանում: Տանձապափցի շնորհալի բրուտը կարասի ուսին նշել է ինչպես դրա պատրաստման տարեթիվը, այնպես էլ իր անունը: Դրանք արձանագրված են այսպես. Թ ՌԵԾԳ Քասապար, այսինքն, կարասը պատրաստված է 1704թ. վարպետ Գասպարի կողմից: Շնորհաշատ բրուտի պատրաստած այդ սքանչելի իրն աչքի է ընկնում կատարման բարձր կարգով, ճիշտ համաչափություններով, դիտարժանությամբ: Այդ, կարասը 310 տարեկան է, հորեյանական է այս տարին նրա համար, և ամենաիտաքրքիրն այն է, որ մինչև հիմա էլ դրա մեջ գինի են պահում, լայնորեն օգտագործում: Կարասի բարձրությունը 92սմ

է, բերանի տրամագիծը՝ արտաքին չափով՝ 28սմ, իսկ բացվածքինը՝ 20սմ: Փորին ունի նախշազարդ 7 գոտի, որի շրջագիծը՝ ամենալայն մասում, կազմում է 2մ 7սմ: Կարասը տեղավորում է 168լ գինի: Ճիշտ այդքան: 84-ամյա պայծառամիտ Սերոբ Երեմյանը պատմեց, որ իր հայր Առաքելն ասել է՝ կարասը մեր մեծ պապ Թունի/Հարություն/ պահան է Տանձապափցի գնել և բերել Շինուհայր, ու սերնդեսերունդ օգտագործում են այն:

Ամսահամարն է կարասի գինին, գյուղում շատերն են նրանում գինի պահել: Հիմա էլ, ինչպես նշեցի, այն ծառայում է իր նպատակին: Եթե ընդունենք, որ միջին հաշվով տարեկան մեկ կարաս գինի է անցել նրանով, կստացվի՝ կարասն իր կյանքի ընթացքում ընդունել է բաց է թողել մեր ժայռերից քամած ավելի քան 52 տոննա ամսահամարն հեղուկ: Իսկ քանի մարդ է վայելել այն, քանի հարսանիք է արվել, քանի ծնունդ... Դե տեսեք, ինչ հրաշք բան է բրուտ լինելը, կարաս թրծելը:

**Սուրեն Վարդանյան
ք. Գորիս**

Երեխայի կամակորությունը, նրա հաղթահարման ուղիները



Ընթացիկ

Սաֆար Եղիազարյան

Կամակորությունը բնավորության բացասական գիծ է: Այն պետք չէ նույնացնել հասարակամության հետ, որն ուժեղ կամքի արտահայտություն է: Կամակորությունը երեխայի համառ ձգտումն է կարգի իր փհաճ ցանկությունները: Կամակորի առաջնորդն ուժը. «Ես այսպես եմ ուզում, այսպես եմ ցանկանում»: Սովորաբար կամակորն ուրիշների նկատմամբ պահանջկոտ է, իր նկատմամբ՝ ոչ: Կամակոր երեխան պարտախանավորության զգացում չի ունենում մանկական կոլեկտիվի, ծնողների, ուսուցիչների, փրանկանների առաջ, ընդհակառակը՝ բավականին հրճված է զգում նրանց պահանջները չկատարելուց: Պարտախանավոր զգում է, որ ինքը սխալ է, բայց պնդում է իրենը:

Ծնողները պետք է ժամանակին նկատեն երեխայի կամակորությունը, վերացնեն այն, իսկ երբ վերացնելն ուշանում է, ապա կամակորությունը դառնում է բնավորության գիծ:

Ընտանիքում երեխայի կամակորությունն առաջանում է տարբեր պատճառներից և արտահայտվում է տարբեր ձևերով:

Փոքրիկ տղան ուզում է հարդարանքի սեղանից վերցնել մոր ժամացույցը: Ծնողները բացատրում են, որ ժամացույցը խաղալիք չէ:

-Չէ, ուզում եմ, - պնդում է երեխան, բղավում, ոտքերը գետնին խփում, լաց լինում: Հայրը մեղմունք է կնքում ու ասում.

-Չգիտես, որ դա իրասածի է, տո՛ւր, թող ձայնը կտրի:

Կինը կատարում է ամուսնու ասածը: Երեխան վարժվում է, այդ ձևով կատարել է տալիս իր բոլոր ցանկությունները: Կամակոր երեխաները մեծերի վրա ազդում են նաեւ այնպես՝ համառ լռությամբ, նրանց խնդրանքը չկատարելով, խռովելով, ուտելուց հրաժարվելով և այլն:

Երբեմն երեխաները կամակոր են դառնում ծնողների (հատկապես նյարդային) պատճառով, ովքեր տնից դուրս ունենցած վատ խնդիրները բերում են տուն, անխղճորեն փաթաթում երեխաների վզին, երեխաների հետ խոսում են բռունցքով, հաշվի չեն առնում նրանց լավ ձգտումները, խեղդում են նրանց նախածեռնությունը, ինքնուրույնությունը:

Ծնողների կողմից երեխաներին ճնշելը, ծեծը, անտեղի պատիժը, վիրավորանքը ոտնահարում են նրանց արժանապատվությունը, խոր ու ծանր ապրումների տեղիք տալիս, որոնք նպաստում են կամակորության զարգացմանը: Օրինակ՝ մայրն աշխատանքից վերադարձել է վատ տրամադրությամբ: Դպրոցական աղջիկը, ով արդեն սովորել է դասերը, կարգի է բերել սեմյակները, դիմում է մորը.

- Մայրիկ, գնում եմ դպրոց, երգի փորձ ունենք:

- Դու ոչ մի տեղ էլ չես գնա, - առանց աղջկան նայելու ասում է մայրը:

- Իսկ ես կգնամ, - հուզմունքից բռնկվում է աղջիկը, որովհետև նրան պետք էր, որ գնա:

Հասկանալի է, մոր կողմից դրվեց կամակորության հիմքը, եւ նման դեպքերը կրկնվելիս աղջիկը եւ տղան մնում են իրենց ասածին:

Ինչպե՞ս վարվել, երբ երեխան համառուն է:

1. Պարզապես չպետք է կատարել նրա քնահաճ ցանկությունները: Թող լացի, ոտքերը գետնին խփի, խռոված մնա: Նման իրավիճակում կամաց-կամաց կթողնի ասածի տեր լինելը, կչափավորի ցանկությունները, կամքը կենթարկեցնի ընտանիքի, կոլեկտիվ շահերին:

2. Ծնողները պետք է ուշադիր ու հարգանքով վերաբերվեն երեխաներին: Երեխային սիրելը ծնողական բնական զգացումն է, իսկ հարգանքը մանկավարժական տակտ է պահանջում: Ծնողը պետք է կարողանա հարգանքը հմտորեն զուգակցել սիրո հետ, անպայման հաշվի առնի երեխայի տարիքային ու անհատական առանձնահատկությունները, խառնվածքը:

3. Ընտանիքում երեխայի կամակորությունը հարթահարելու կարելու պայման է այն, որ ընտանիքում եւ ծնողները, եւ ավագ անդամները ներկայացնեն միասնական պահանջ: Եթե ընտանիքում հայրը պահանջկոտ է բոլորի հանդեպ, մայրը՝ զթասիրտ, ներողամիտ, ապա մանկ ընտանիքում երեխան հույսը կդնի հովանավորողի վրա, կամակորությունը կդառնա բնավորության գիծ:

4. Փոքր տարիքի երեխաների կամակորությունը կտրելուց օգնում է խոսակցության նյութի շեղումը, փոխումը, մոր աշխատանքի մեջ ներգրավումը: Կամակոր դեռահասների ու պատանիների վրա ազդում են ընկերների շփումը, սիրալի գրույցները:

Հաճախ կամակոր երեխան հեշտությամբ է կատարում պահանջը կամ սոսկ առաջադրանքը, երբ դրանք լինում են ընդհանուր ձեռով, իբրև իրեն չի վերաբերում: Օրինակ՝ փոքրիկ տղան գտնվել է ավագ եղբոր հետ, խռովել ու չի ցանկանում առաջադրված պահանջը կատարել: Մայրն ասում է. «Վեր կացեք, լվացվեք, նստեք ճաշի սեղանին. ճաշելուց հետո գնալու ենք կինո»:

Միանգամայն հասկանալի է, որ ընդհանուր ձեռով առաջադրված այսպիսի պահանջից հետո փոքրիկը եւ կծաշի, եւ կհաշտվի ավագ եղբոր հետ:

5. Աշխատանքային դաստիարակությունը երեխաների վատ վարքագծի, այդ թվում եւ կամակորության հաղթահարման լավագույն միջոցն է: Ուստի ուղղություն տալով երեխաների հետաքրքրություններին ու ձգտումներին՝ պետք է նրանց փոքրից ներգրավել տնային եւ հանրագուտ աշխատանքի մեջ:

Այունյաց երկիր

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հիմնադիր եւ ՀԲՄՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՆԳ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ԳԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Գեղարտ՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:

Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Ինտերնետ՝ www.syuniacyerkir.am

Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել:

Ելույթը ներկայացնելու մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՎԱՋԳ - ԾԱՆՈՒԹՅՈՒՆ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Հղումը «Այունյաց երկրին» պարտադիր է:

© Նշանի տակ տպագրվում են գովազդային նյութերը: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթ տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 2000, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.11.2014թ.: